9 ՓԵՏՐՈՒԱՐ 2000 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 22 (1990)

Azg

Azg
armenian daily

Նոր սպանություն Բելգրադում. զոհը պաշտպանության նախարարն է

ԲԵԼԳՐԱԴ, 8 ՓԵՏՐՎԱՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ՝ Սպանվել է Հարավսլավիայի պաշտպանության նախարար Պավլե Բուլատովիչը՝ Սլոբոդան Միլոշեւիչի մերձավոր զինակիցներից մեկը: Ինչպես հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը, երկուշաբթի երեկոյան Բուլատովիչին գնդակահարել են Բելգրադի ռեստորաններից մեկի պատուհանից: Նրա հետ եղած երկու հոգին վիրավորվել են: Հարձակվողին հաջողվել է անհետանալ:

Հարավսլավիայի կառավարությունը անհապաղ հայտարարել է, որ սկսում է «անզիջում պայքար ահաբեկչության դեմ»: Սերբական ընդդիմությունը տագնապում է երկրում բռնության ալիքի առնչությամբ: Մեկ ամիս առաջ Բելգրադում սպանվել էր Ժելկո Ռաժնյատովիչը՝ սերբական կամավորական ջոկատների հրամանատարը, որը հայտնի էր Արկան մականունով:

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄ

Սկսվեց իր բնույթով առաջին էներգետիկ համաժողովի աշխատանքը

Համաժողովի վերջնանպատակը ներդնողների վստահության ու հետաքրքրության բարձրացումն է

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱՅԻՆ

Երեկ Երեւանում աշխատանքները սկսեց ՀՀ էներգահամակարգի բաշխիչ չորս ընկերությունների մասնավորեցման համաժողովը: Այն իր բնույթով ու մասշտաբներով առաջինն է եւ նպատակն է շահագրգիռ կողմերին հավաքելն ու պարզաբանելը, թե մասնավորապես էներգետիկ ոլորտում ինչ հեռանկարներ կան, մի խոսքով այն ամենը, ինչը կարող է հետաքրքրել ներկա ու պոտենցիալ ներդնողներին՝ օրենսդրական, քաղաքական դաշտը եւ այլն: Այս ամենի հետ մեկտեղ համաժողովի նպատակն է հնարավորինս ապահովել էներգետիկ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման թափանցիկությունն ու հրապարակայնությունը, կառավարության դիրքորոշումներն ու այդ առումով նաեւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կարծիքներն ու գնահատականները:

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՈՒՄԸ

Համաժողովին ողջույնի խոսք էր հղել ՀՀ վարչապետը, մասնակցում էին կառավարության անդամներ, ներկայացուցիչներ ԱԺ-ից եւ էներգետիկայի ոլորտի ձեռնարկություններից, ինչպես նաեւ ներկայացուցիչներ ՀՀ-ում գտնվող գրեթե բոլոր միջազգային ֆինանսական կառույցներից (Համաշխարհային բանկ, Միջազգային ֆինանսական կորպորացիա IFC, Եվրաբանկ, USAID, TACIS), նաեւ խոշոր խորհրդատվական ու ներդրումային ընկերություններ, այդ թվում ABB Energy Ventures, AES Silk Road Inc, Itera International, ACEA եւ այլք:

Տես էջ 3

ԱՅՑԵՐ

Արտգործնախարար Օսկանյանը կմեկնի Մոսկվա եւ Բանգկոկ

ԵՐԵՎԱՆ, 8 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ՝ Վաղը՝ փետրվարի 9-ին, արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը կմեկնի Մոսկվա: Մեկօրյա աշխատանքային այցի ընթացքում Հայաստանի արտգործնախարարը հանդիպումներ կունենա Ռուսաստանի Դաշնության ղեկավարության հետ:

Ինչպես հայտնեցին ԱԳՆ հասարակայնության հետ հարաբերությունների վարչությունից, հանդիպումների ընթացքում կքննարկվեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն առնչվող հարցեր:

Մոսկվայից նախարար Օսկանյանի գլխավորած պատվիրակությունը կմեկնի Բանգկոկ՝ փետրվարի 12-19-ը կայանալիք ՄԱԿ-ի Առեւտրի եւ զարգացման հանձնաժողովի (UNCTAD) 10-րդ հանդիպմանը մասնակցելու նպատակով: Հանդիպման օրակարգում են գլոբալիզացիայի, պլանային-ինչից շուկայական տնտեսության անցման շրջանում գտնվող եւ զարգացող երկրների, միջազգային առեւտրի կանոնակարգմանը վերաբերող խնդիրները:

Պատվիրակության կազմում են նաեւ առեւտրի եւ արդյունաբերության նախարար Կարեն Ճշմարիտյանը, ԱԳ փոխնախարար Արմեն Մարտիրոսյանը:

Արտգործնախարար Օսկանյանը փետրվարի 13-ին կվերադառնա Երեւան՝ նախագահ Քոչարյանի Լիբանան պաշտոնական այցելության շրջանակում Բեյրութ մեկնելու նպատակով:

ՀՀ պաշտպանության նախարարի գլխավորած պատվիրակությունը մեկնեց Բելառուս

ԵՐԵՎԱՆ, 8 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ՝ Ըստ ՊՆ լրատվության եւ քարոզչության վարչության հաղորդագրության, Հայաստանի Հանրապետության եւ Բելառուսի Հանրապետության պաշտպանության նախարարների համագործակցության ծրագրի համաձայն եւ Բելառուսի պաշտպանության նախարար, գեներալ-գնդապետ Ա. Չումակովի հրավերով փետրվարի 8-ին Բելառուս է մեկնել ՀՀ պաշտպանության նախարար, գեներալ-լեյտենանտ Վաղարշակ Հարությունյանի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը:

Գեներալ-գնդապետ Կոնստանտին Տոցկին Երեւան կժամանի փետրվարի 25-ին

Կողմերի համաձայնությամբ Ռուսաստանի սահմանապահ դաշնային ծառայության (ՍՊԾ) տնօրեն գեներալ-գնդապետ Կոնստանտին Տոցկու այցը, որ նախատեսված էր երեկ, տեղափոխվել է փետրվարի 25-26-ին: Այդ մասին մեզ երեկ հայտնեց Հայաստանում ՌԴ ՍՊԾ օպերատիվ խմբի պետ գեներալ-լեյտենանտ Սիխայիլ Նայմիլոն: Նա նշեց, որ այցը տեղափոխելու մասին որոշումը կայացվել է համաձայնեցնելով ՀՀ նախագահի, վարչապետի, ազգային անվտանգության նախարարության ղեկավարության հետ: Այցի հետաձգումը կապված է ՍՊԾ տնօրենի աշխատանքային օրացույցում փոփոխությունների հետ:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ
ՌՏԱՐ-ՏԱՍՍ-ի թղթակից
«Ազգի» համար

Ադրբեջանը նավթի ներկրող է դառնում էներգետիկ ճգնաժամի պատճառով

ԲԱՔՈՒ (ՌՈՅԹԵՐ)՝ Ոչ շատ հեռավոր անցյալում աշխարհի չցված նավթի կեսն արտադրող Ադրբեջանն այժմ ստիպված է ներկրող դառնալ, քանի որ բավարար պաշարներ չունի իր սեփական էլեկտրակայանությունն արտադրելու, երկուշաբթի օրը հայտարարեց «Սոֆար» պետական նավթային ընկերությունը: «Բավարար քանակությամբ անգուն նավթ չունենք այս ձմեռ մեր էլեկտրակայանների աճող կարիքները հոգալու համար, հետեւաբար խնդրել ենք կասպյան արտադրողներից մեզ առաջարկել որոշակի լուծումներ», հայտարարեց «Սոֆարի» արտաքին տնտեսական հարաբերությունների ղեկավար Էլշադ Նասիրովը:

Այժմ «Սոֆարը» հետամուտ է գնել կամ բարտերային սկզբունքով նավթ ձեռք բերել՝ երկրի էլեկտրակայանները բանեցնելու համար, ասաց Նասիրովը:

Ադրբեջանը, որ տարեկան 9 մլն տոննա անգուն նավթ է արտադրում (180 հազար բարել օրական), արդեն իսկ ստիպված էր դադարեցնել նավթի արտահանումները եւ իր ողջ պաշարներն ուղղել դեպի էլեկտրակայաններ: Բանն այն է, որ ամռանը Ադրբեջանն իր արտադրած նավթի մեծ մասն արտահանում է, քանի որ համապատասխան պահեստներ չունի, իսկ ձմռանը 150 հազարից մինչեւ 230 հազար տոննա է ներկրում, երբ էներգիայի սպառումը երկրում կրկնապատկվում է:

Սակայն «Սոֆարն» այս տարի սպացել է ընդամենը 50 հազար տոննա, եւ պետական «Ազերէներգիա» ընկերությունն ստիպված է երկրի որոշ շրջաններում հոսանք մատակարարել օրական ընդամենը 13 ժամ:

Նասիրովի համաձայն, կառավարությունը կասպյան մյուս երկրներից խնդրել է մինչեւ 200 հազար տոննա նավթ տրամադրել իր գտարաններին: Սակայն նավթի ներկայիս բարձր գների պայմաններում դժվար թե Ադրբեջանին հաջողվի արագ կարգավորել էներգետիկ ճգնաժամը:

«Որոշում կայացնելը շատ դժվար է լինելու, քանզի նավթի գների ներկա պայմաններում հայտնի չէ, թե Ադրբեջանն ինչպես է վճարելու», եզրակացրեց Նասիրովը:

Կառավարական հանձնաժողովն այս օրերին քննարկում է եղած առաջարկները:

Ստանվել է Չեխիայի փոխնախագահը

ՄՈՍԿՎԱ, 8 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ՝ Չեխիայի փոխնախագահ Վախա Արսանովը սպանվել է եւ թաղվել Շատոյում: Ըստ ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ի, այս մասին այսօր լրագրողներին հայտնել է Հյուսիսային Կովկասում զորքերի միացյալ խմբավորման հրամանատար, գեներալ-գնդապետ Վիկտոր Կազանցեւը: Նա սակայն չի ճշտել, թե երբ է դա տեղի ունեցել:

ՕՂԱՅԻՆ ՈՒԺԲԱԿՈՇՈՒՄՆԵՐ

Իսրայելական նոր ագրեսիա Լիբանանի դեմ

Փետրվարի 7-ի լույս 8-ի գիշերն իսրայելական ռազմական ինքնաթիռները գրոհել են Լիբանանի խաղաղ բնակչության եւ ենթակառույցների վրա: Վիրավորվել է 20 մարդ, այդ թվում երեխաներ եւ կանայք, ինչպես նաեւ խորտակվել են երկրի մայրաքաղաքը, հյուսիսը եւ արեւելքը էլեկտրահոսանքով սնուցող 3 էլեկտրակայաններ, հանրապետության մեծ մասը հայտնվել է մթության մեջ:

Իսրայելի օդուժի դաժան հարձակումները տեղի ունեցան այն գրոհներից հետո, որոնք վերջերս ծեռնարկել էր «Հզբոլահն» ընդդեմ իսրայելական զորքերի եւ այսպես կոչված «Հարավլիբանանյան բանակի»: Նկատելի է նաեւ, որ վերոհիշյալ ագրեսիան հաջորդեց օրերս կայացած իսրայելական փոքրակազմ կառավարության եռանդուն նիստերին: Այս առումով կարելի է ասել, որ վարչապետ Եհուդ Բարաքը տեղի տվեց բանակի աճող ճնշումներին, որոնք պահանջում էին ուժգնորեն հակադարձել «Հզբոլահի» սասկացող գործողություններին ոմբակոծելով լիբանանյան ենթակառույցները:

ՌՈՅԹԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ

Փետրվարի 8-ին «Հզբոլահը» հանդես է եկել հայտարարությամբ, որ շեշտել է, որ «իրեն հակադարձելու իրավունք է վերապահում հարմար ժամանակին, որը կարող է շատ շուտ լինել»: Լիբանանի վարչապետ Սելիմ Հոսն էլ հայտարարել է, որ «դիմադրությունն արտահայտում է ողջ Լիբանանի մերժումն օկուպացիային»: Չի բացառվում, որ առաջիկա օրերին ավելի թեժ զարգացումներ կատարվեն, եթե անհապաղ չմիջամտեն շահագրգիռ գերտերությունները:

Սիրիան առաջինն է արձագանքել իսրայելական ագրեսիային եւ դատապարտել այն: Ակնկալվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արտահերթ նիստ:

Ա. Ա.

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻԿ

Նոր հեղինակությունների, դաշինք-միությունների կարոտը

ԱԺ-ում քաղաքական հավակնությունների նոր ալիք է քարշ տալիս

Ինչ հայաստանյան կառավարությունը տնտեսական ոլորտումների ներփակ շրջայում է փորձելով հայթայթել աբխազավարձերի, թոշակների ու նպաստների վճարման համար անհրաժեշտ գումարներ, ԱԺ-ի նորագույմար նստաշրջանում քաղաքական հավակնությունների ալիք է ծառանում: Պատգամավորների շարքերում համառորեն ավելի ու ավելի հաճախ են հնչում երրորդ ուժի անհրաժեշտության մղումները, ընդսմին յուրաքանչյուր քաղաքական հոսանք, խումբ կամ խմբակցություն հավակնում է իրեն տեսնել այդ երրորդ ուժի դերում:

Երեքշաբթին քաղաքական հայտարարությունների օրն է, եւ առաջնության դափնիները վերաբաշխվեցին «Միասնություն» խմբակցության անդամ Ռուբեն Գեւորգյանին, որը «սպանիչ իրականության» իր գնահատականներում մատնանշեց երկու կարեւոր գործոն. ա) հայ-հասարակության մեջ այդպես էլ չեն ստեղծվում նոր հեղինակություններ, նախկիններն համակարգը սպանում է նորի առաջացման յուրաքանչյուր փորձ եւ բ) անցյալից ժառանգություն մնացած «տխուր եւ ամոթալի» ղեկավարները խորացնում են ազգային ճգնաժամը, ուստի պետք է շուտափույթ ազատվել նախկինների ժառանգությունից եւ տվյալ ժառանգության կրող ղեկավարներից: «Միասնություն» խմբակցությունն, այսպիսով, ամրագրում է իր հեռեւողականությունը վարչապետից սպասելով կադրային փոփոխություններ, որոնք էլ կազմ բաղը հաճո չէ Արամ Սարգսյանին:

«Իրավունք եւ միաբանություն» խմբակցության անունից Աղասի Արշակյանը հրաժարակեց Հայաստան-Ռուսաստան-Բելառուս դեռեւս առաստելական միությանն աջակցելու հայաստանյան ԱԺ միջխմբակցային պատգամավորական խմբի ստեղծումը, որի հիմնադիրները 17 պատգամավորներ են: ԱԺ փոխխոսնակ Տիգրան Թորոսյանը համառորեն պահանջեց Աղասի Արշակյանից հրաժարակել սույն պատգամավորների անունները անկախ խումբ-խմբակցությունից: Հայաստան-Ռուսաստան-Բելառուս միության կողմնակիցների շարքերում հայրենիքի դիմաց:



«Իրավունք եւ միաբանությունից» Աղասի Արշակյանին համակարծիք են Համլետ Հարությունյանը, Գագիկ Կոստանդյանը:

Ո՞ւմ համար է հնչում Մեղրիի զանգը

Պատգամավոր Գրիգոր Հարությունյանը հրաժարակեց Մեղրիի բնակիչների հայտարարությունը, որն ահազանգն էր արդեն տեւական ժամանակ շրջանառվող տարածքների փոխանակման վտանգավոր տարբերակի: Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը բոլորիս գերնպատակն է, սակայն պարբերաբար ասպարեզ նետվող տարածքների փոխանակման վարկածն, ըստ որի նախկին ԼՂԻՄ-ի եւ Լաչինի դիմաց Հայաստանն Ադրբեջանին որպես մարդասիրական կամ այլ տիպի միջանցք տրամադրում է Մեղրիի տարածքներից Նախիջեւանին կապվելու համար, մեղրեցիներին խիստ անհանգստացրել է, հատկապես որ դրան գումարվում է հանրապետության իշխանությունների նկատելի անտարբերությունը մարզի հոգսերի հանդեպ, իսպառ դադարել է ներդրումների հոսքը, եւ սեփական հողի վրա գոյատեւելու անհնարինությունն է համակում Մեղրիի բնակիչներին: Հրապարակ են նետվում անգամ փոխանակման գնային չափորոշիչները. յուրաքանչյուր բնակչին 5 հազար դոլար, յուրաքանչյուր բնակարանին 10 հազար դոլար, ընդամենը 15 հազար դոլար:

Պատգամավոր Գրիգոր Հարությունյանը մեղրեցիների անունից պահանջեց պատասխանատու հերել այս լուրերը փաստելով, որ նախագահի խոսնակ Վահե Գաբրիելյանը «ոչինչ չասող պատասխան» է տվել Դավոսից հետո գումարված ճեպազրույցում:

Քաղաքական հոգսերի շրջապտույտում խորհրդարանը 40-50 պատգամավորի ներկայությամբ վավերացրեց բավական կարեւոր տնտեսական օրինագծեր. վիճակագրության մասին օրենքը, Վերահսկիչ պալատի գործունեության տարեկան ծրագիրը, ՊԱՎ-ով հիվանդների մուտքը Հայաստան կապավորող օրենսդրական փոփոխությունը: Էներգետիկ հանձնաժողովի 2000 թ. ծրագիրը կննարկվի այսօր, եւ ԱԺ եռօրյան կեզրափակվի վարչապետ Արամ Սարգսյանի կառավարությանն ուղղված պատգամավորների հարցուպատասխանով, որը խոստանում է նոր զարգացումների սկիզբ դառնալ:

Ն. ԳԻԼԲԱՐՅԱՆ

«Շտաբուժօգնության» բենզինի հետքերով

Երեկվա համարում «Ազգն» անդրադարձել էր բենզինի բացակայության եւ ֆինանսական փակուղու կապակցությամբ «Շտաբուժօգնության» կենտրոնակայանում առաջացած վիճակին, որը կարելի էր բնորոշել պարզ մի արտահայտությամբ ասելամբ գործադուլ:

Վերջին տվյալներով, որոնք երեկ, օրվա ավարտին «Ազգին» հաղորդեց «Շտաբուժօգնության» գործադիր տնօրեն Ռաֆայել Խառատյանը, քաղաքապետ Ալբերտ Բազեյանի եւ վարչապետի հանդիպման արդյունքում վիճակը կարգավորվել է: Երեկ, ժամը 1:30-ից սկսած բենզամատակարարումը վերականգնվել է, եւ օրվա ընթացքում հնչած ոչ մի կանչ անպատասխան չի մնացել: Բուժհիմնարկն աշխատում է նախկին արդյունավետությամբ շնորհիվ «Քաղպետրոլսերվիս» ընկերությանը շտապ փոխանցված 6 մլն դրամի, որը գոնե մասամբ եւ ժամանակավորապես հատուցում է «Շտաբուժօգնության» ունեցած 26 մլն դրամի պարտքը: Հարցի կարգավորմանը մասնակից է դարձել նաեւ առողջապահության նախարարությունը պարտավորվելով հաշվանցում կատարել «Շտաբուժօգնության» օգտին:

Ինչեւէ, թերեւս առաջիկա մի քանի ամիսների համար, հերթական անգամ, վիճակը կարգավորված է:

Ա. Ք.

ՍԵՄԻՆԱՐ

«Զանգվածային լրատվամիջոցներն ու արդարադատությունը»

Փետրվարի 8-ին Սահմանադրական իրավունքի կենտրոնը, «Հայաստանի մշակույթի խորհրդարան» հասարակական կազմակերպությունը, «Օգոստոսի 23, Ազգային դաշինք» իրավապաշտպան միությունը, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանատը ՀՀ ՍԴ Շահամիրյանների անվան տպահուն կազմակերպել էին «Զանգվածային լրատվամիջոցներն ու արդարադատությունը» թեմայով սեմինար: Բացման խոսք ասաց Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը: Նա կարեւորեց ժողովրդավարական հարաբերությունների պարագայում եւ իրավական անհրաժեշտ դատում ազատ մամուլի դերը եւ ավելացրեց, որ չպետք է ունենանք այնպիսի մամուլ, որտեղ լրատվամիջոցի այս կամ այն ներկայացուցիչը կարող է հրապարակել որեւէ հոդված՝ երբեք չմտածելով հասարակական արձագանքի մասին: «Անհրաժեշտ է հստակ պատասխանատվություն եւ անհրաժեշտ է սահմանել մեխանիզմ, որպեսզի յուրաքանչյուր այնպիսի հարցադրում, որն օրենսգրքի հոդվածի հատկանիշներով պարունակում է որոշակի իրավախախտում, անպայմանորեն սահմանված կարգով արձագանքվի»: «Օգոստոսի 23, Ազգային դաշինք» իրավապաշտպան միության նախագահ Պուլկին Սերոբյանը նշեց, որ մամուլում եղել են 210, իր իսկ որակմամբ, ծանր հանցագործությունների մասին հրապարակումներ, որոնք, սակայն, անարձագանք են մնացել եւ չեն քննարկվել գերատեսչական համապատասխան կազմակերպություններում: Իրավաբանի խոսքերով՝ այսօր լրագրողները գրում են ինչ ցանկանում են, այսինքն՝ «Հայաստանում կա ոչ միայն դեղին մամուլ, այլեւ՝ պատվերով լրագրողներ»: Սերոբյանը նշեց, որ շատերը բողոքում են «Առավոտից», «Հայկական ժամանակից», «Հայոց աշխարհից», սակայն առանց վերոհիշյալ թերթերի լրատվական դաշտը դժգույն կլինի: Նա ավելացրեց, որ մամուլը միայն լրատվություն չէ, եւ որ նրա առաքելությունն ամրագրված եւ պատշտպանված է օրենքով, «որը, սակայն, որոշ դեպքերում կատարյալ չէ եւ չի գործում, իսկ այդ պարագայում օրենքը պարզապես կխայխայվի եւ կժանգոտվի»:

Ելույթ ունեցան նաեւ մի շարք լրագրողներ եւ իրավաբաններ: Իսկ ՍԴ նախագահն ավելացրեց, որ այսպիսի քննարկումներն անհրաժեշտ են մեր պետությանը եւ առաջարկեց կազմակերպել նոր սեմինարներ նմանատիպ թեմաներով:

ԳԱՅԱՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Գիլի լիճը կվերականգնվի

Վերջերս ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը եւ ՀՀ կառավարությունը ստորագրեցին Գիլի լճի վերականգնման վերաբերյալ ծրագրային փաստաթուղթը: Գիլի լճի հազվագյուտ խոնավ տարածքը գտնվում էր Սեւանա լճի ավազանի հարավարեւելյան մասում եւ ավելի քան 100 տեսակ չվող ջրլող թռչունների բնադրավայր էր:

1960-ականներին չորացվեց Գիլի լիճը՝ տարածքը գյուղատնտեսական նպատակներով օգտագործելու համար: Լճի էկոհամակարգին լուրջ հարված հասցվեց, եւ տարածից վերացան թռչունների ու բույսերի հազվագյուտ տեսակներ: Բացի այդ, չորացումը բացասաբար ազդեց շրջակայքում բնակվող համայնքների վրա, որոնց համար լիճը ծկնորսության եւ որսի վայր էր:

Գիլլի լճի եւ շրջապատի խոնավ տարածքի կենսաբազմազանությունը վերականգնելու նպատակով տեղական համայնքի եւ «Խազեր» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ ՀՀ կառավարությունը, ՄԱԶԾ եւ ՄԱԿ-ի գլոբալ էկոլոգիական հիմնադրամը համատեղ մշակեցին մի ծրագիր՝ ուղղված լճի ամբողջական վերականգնմանը: Ծրագրի սկզբնական փուլում նախատեսվում է լճի ջրային տարածքի վերականգնում եւ ամբողջ էկոհամակարգի կենսաբազմազանության պահպանման հեռանկարային ծրագրի մշակում:

Այս ծրագիրը ՄԱԿ-ի գլոբալ էկոլոգիական հիմնադրամից ֆինանսավորվող 5-րդ նախագիծն է Հայաստանում եւ նրա յուրահատկությունն է, որ Գիլի լճի շրջակայքում բնակվող համայնքներն անմիջապես ներգրավում կունենան ծրագրի իրականացման մեջ եւ կստանձնեն լճի ու նրա յուրահատուկ կենսաբազմազանության պահպանման պատասխանատվությունը:

Խորհրդանշական է նաեւ, որ Գիլի լճի խոնավ տարածքի վերականգնմանը նվիրված այս ծրագիրը ստորագրվեց 2000 թ. փետրվարի 2-ին, որը խոնավ տարածքների պահպանման միջազգային օրն է:

ՄԱԿ-Ի ՀԱՐԱՎԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

Գերմանական GTZ ընկերության շնորհիվ աշխատատեղեր Ստեփանավանում

Թերթի անցած տարվա համարներից մեկում տեղեկացրել էինք, որ Ստեփանավանում 1999 թ. պարիզից գործում է Գերմանական տեխնիկական համագործակցության (GTZ) «Ինքնօգնության միջոցառումների խրախուսում» ծրագիրը, որի նպատակն է, երկու տարվա ընթացքում փոքր բիզնեսի համար կարճաժամկետ փոխառություններ տրամադրելով, ստեղծել 300 աշխատատեղ: Ինչպես տեղեկացանք ծրագրի Ստեփանավանի ներկայացուցիչ Սիլվա Բալչունասից, ծրագիրը հաջողությամբ գործում է, այսօր արդեն ֆինանսավորել է 13 բիզնես-ծրագիր, որի շնորհիվ ստեղծվել է ավելի քան 50 աշխատատեղ: Քանի որ ծրագրի հիմնական նպատակը կանանց համար աշխատատեղեր ստեղծելն է, խրախուսելով եւ սովորեցնելով բիզնես-ծրագրեր կազմելը, այդ իսկ նպատակով վերջերս Ստեփանավանի գրասենյակում կազմակերպվեցին բիզնեսի եւ մենեջմենթի սեմինարներ:

Չնայած առկա մեծ դժվարություններին, երբ ժողովրդի անվճարունակության պատճառով չկա սպառման շուկա, այնուամենայնիվ, նախաձեռնությունն արձագանք գտավ շատերի մեջ, որոնք լրջորեն զբաղվում են փոքր բիզնեսով հետագայում ընդլայնելու ակնկալիքով:

Մ. ՄԻՍԿՈՅԱՆ
Վանաձոր

Յայտարարություն

«Ազգ» օրաթերթի խմբագրությունն ու տնօրենությունը խորապես վշտակցում են ՀՀ նախագահի մամլո գրասենյակի ղեկավար Հասմիկ Պետրոսյանին նրա սիրելի հոր

ՌԱԶՄԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ

մահվան կապակցությամբ:

Հանգուցյալի հուղարկավորությունը տեղի կունենա այսօր, չորեքշաբթի, ժամը 13-ին, Սեւան քաղաքում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 8 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս 529353, AT&T (3742) 151065,
e-mail INTERNET: azg2@arminco.com
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՀՐԱՅՐ ՁՈՐԵԱՆ / հեռ. 562863
Համակարգչային ծառայություն / 562941
Apple Macintosh համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Էներգետիկա

Էներգետիկ ցանցերի սեփականաշնորհումը

Տնտեսական եւ ռազմավարական անկանխատեսելի հետեւանքների ակնկալվող դաշտում

Հայաստանյան չորս էներգետիկ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման որոշումն արդեն անդառնալի է թվում: Անցած 2000 թ. փետրվարի դրությամբ ծածկող Համաշխարհային բանկի կառուցվածքային բարեփոխումներ-4 վարկի բանակցությունների առանցքում, ինչպես նաեւ միջազգային ֆինանսական այլ աղբյուրներից այս տարի Հայաստանին տրամադրվելիք 122 մլն դոլարի վարկային ծրագրերի տիրույթում իբրեւ նախադայման անընդմեջ վեր է հառնում այս ցանցերի մասնավորեցումը: Անցած տարեվերջին Հայաստանը չստացավ վաղորոք սահմանված SAC-3 վարկի վերջին 25 մլն դոլարը, եւ միայն հունվարի 25-ին մենք ստացանք պետությանը կենսական անհրաժեշտ այս գումարի 20 միլիոնը. 5 միլիոն մնաց առկախված, եւ ՀԲ բացատրություններից ամենաազդեցիկը հետեւյալն էր՝ Հայաստանը ուշացրել է բաշխիչ ցանցերի միջազգային աուդիտը, արդյունքում խախտվել է սեփականաշնորհման ժամանակացույցը: ՀԲ-ն հստակորեն շարադրում է պնդելով, թե բաշխիչ ցանցերի մասնավորեցումը կդառնա հայաստանյան էներգետիկ համակարգի բարեփոխման ալֆան եւ օմեգան:

Միջազգային արժութային հիմնադրամը եւս իր տեղեկանքներում փաստում է, որ «մահացած է ՀՀ էներգահամակարգում տիրող քաոսային վիճակով եւ կասկածելի գործարքներով»: ՀԲ փորձագետ Սալման Զահիրը եւ ՄԱՀ-ի առաքելությունների ղեկավար Լուիս Վալդեմիսոն Հայաստան յուրաքանչյուր այցի ընթացքում պետական բարձրաստիճան իշխանավորների հետ բանակցելիս մշտապես ի ցույց են դնում էներգետիկ համակարգում առկա գումարների ցածր հավաքագրելիությունը, գերնորմատիվային կորուստները, որոնց ներքո փաստացի թաքնված է գումարների յուրացումը: Տեղական էներգետիկ ձեռնարկությունների ղեկավարներն ամեն ինչ պատճառաբանում են ցանցի ֆիզիկական եւ բարոյական մաշվածությամբ եւ էներգահամակարգի արդիականացման համար անհրաժեշտ գումարների բացակայությամբ:

Աշխարհաքաղաքական խարդավանքները եւ պետական շահը

Էներգետիկ համակարգում բարեփոխումներն այլընտրանք չունեն, սակայն, մինչ գործնական քայլեր ձեռնարկելը հայաստանյան փորձագետների մի խումբ վերլուծել է էներգետիկ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման որոշման գործընթացում ծավալվող զարգացումները: **«Ազգ»** օրաթերթն այս տիրույթում անդրադարձել է ռուսաստանյան ընկերությունների հավակնություններին, սակայն կա նաեւ հակառակ կողմը: Էներգետիկ բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման համար ստեղծվել էր հատուկ հանձնաժողով, որի կազմում ֆինանսների նախկին նախարար Էդվարդ Սանդոյանն էր, սեփականաշնորհման նախարար Պավել Ղալթախչյանը, էներգետիկայի նախարար Գագիկ Մարտիրոսյանը, կառուցվածքային եւ տնտեսական բարեփոխումների նախարար Վահրամ Ավետիսյանը, էներգետիկ հանձնաժողովի նախագահ Վարդան Մովսիսյանը, գործընթացը համակարգում էր նախկին վարչապետ, ներկայիս էկոնոմիկայի նախարար Արմեն Դարբինյանը, եւ ՀՀ կառավարության ստեղծած հատուկ այս հանձնաժողովը, շահագրգիռ այլ գերատեսչությունների մասնակցությամբ, դիտորդների կարգիով, չի ձեռնարկել համապատասխան սպառիչ քայլեր:



Հանձնաժողովը առավելություն է տվել այսպես կոչված կոնսորցիումի տեխնիկատնտեսական եւ ֆինանսական առաջարկներին. 1998 թ. հուլիսի 17-20-ը հայտարարված մրցույթի ընթացքում հաղթող է ճանաչվել Raiffasen Investement AG ավստրիական ընկերությունը, ինչպես նաեւ իսրայելական Ben Shahar Associates, որոնք կոնսորցիում են կազմել: Հանձնաժողովի եզրակացություն-փաստաթղթում գրված է. «Չնայած սկզբնական տեխնիկական գնահատման անբավարար արդյունքներին (հիմնական պատճառը կոնսորցիումի տեխնիկական առաջարկում խնդիրների ոչ հստակ եւ ոչ մանրամասն ներկայացումն էր), եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր մրցույթի անցկացումը կդահանջի լրացուցիչ ժամանակ ու կարող է ունենալ անկանխատեսելի արդյունք, ընդունելի համարել կոնսորցիումի տեխնիկական առաջարկը»:

Փորձագետները, որոնց դիմեց **«Ազգը»**, հանձնաժողովի այս գնահատականը համարեցին առավել քան անհասկանալի. հստակորեն շեշտադրելով «անկանխատեսելի արդյունք» արտահայտությունը: Մեզ պարզաբանեցին, որ ավստրիական եւ իսրայելական այս երկու ընկերությունների մասնավորեցման գործընթացում գրված է. «Չնայած սկզբնական տեխնիկական գնահատման անբավարար արդյունքներին (հիմնական պատճառը կոնսորցիումի տեխնիկական առաջարկում խնդիրների ոչ հստակ եւ ոչ մանրամասն ներկայացումն էր), եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր մրցույթի անցկացումը կդահանջի լրացուցիչ ժամանակ ու կարող է ունենալ անկանխատեսելի արդյունք, ընդունելի համարել կոնսորցիումի տեխնիկական առաջարկը»:

Փորձագետները, որոնց դիմեց **«Ազգը»**, հանձնաժողովի այս գնահատականը համարեցին առավել քան անհասկանալի. հստակորեն շեշտադրելով «անկանխատեսելի արդյունք» արտահայտությունը: Մեզ պարզաբանեցին, որ ավստրիական եւ իսրայելական այս երկու ընկերությունների մասնավորեցման գործընթացում գրված է. «Չնայած սկզբնական տեխնիկական գնահատման անբավարար արդյունքներին (հիմնական պատճառը կոնսորցիումի տեխնիկական առաջարկում խնդիրների ոչ հստակ եւ ոչ մանրամասն ներկայացումն էր), եւ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր մրցույթի անցկացումը կդահանջի լրացուցիչ ժամանակ ու կարող է ունենալ անկանխատեսելի արդյունք, ընդունելի համարել կոնսորցիումի տեխնիկական առաջարկը»:

Փորձագետները, որոնց դիմեց **«Ազգը»**, հանձնաժողովի այս գնահատականը համարեցին առավել քան անհասկանալի. հստակորեն,

տնտեսություն

– Ի՞նչպիսի հարցեր են քննարկվում Դավոսյան համագումարներում:

– Այս տարվա համագումարը քննարկումների առումով տարբերվում էր նախորդներից: Քանի որ նախորդ տարիներին Դավոսի համագումարները, սովորաբար, համընկնում էին որևէ ճգնաժամի հետ: Օրինակ անցյալ տարի Ռուսաստանի ճգնաժամն էր, եւ դրանից բխող միջազգային տնտեսական անկայունության մտահոգությունը կար, նախանցյալ տարի ասիական տնտեսական ճգնաժամն էր, 80-ականներին մտահոգիչ հարցերը վերաբերում էին մի շարք լատինամերիկյան, ասիական երկրների մեծ արտաքին պարտքերին, բանկային համակարգի ճգնաժամին եւ այն տնտեսական, կառուցվածքային բարեփոխումներին, որոնք անհրաժեշտ էին այդ տնտեսությունները շտկելու եւ պարտքը վերակարգավորելու համար: 70-ականներին նավթի գների կտրուկ աճն էր դրա առաջացրած ցնցումները, որը թե զարգացող եւ թե զարգացած երկրներում տնտեսական անկայունություն էր առաջացրել, օրինակ ճգնաժամ առկա էր եւ Ամերիկայում ու Եվրոպայում, եւ Աֆրիկայում ու Ասիայում, թեպետ այս երկու խումբ երկրների խնդիրները տարբեր էին: Այս տարի այդպիսի ճգնաժամ չկար: Տնտեսությունը Ամերիկայում երկար ժամանակ շարունակաբար շատ լավ վիճակում է, Եվրոպայում վերելք է արձանագրում, ասիական տնտեսություններում եւս առկա է բարձր աճը, նույնիսկ Ռուսաստանում արդեն տնտեսական աճ կա, այնպես որ, այս տարի հարցերն ավելի շատ վերաբերում էին անցյալ դարից ժառանգած խնդիրներին չֆավորություն, սոցիալական արդարություն, էկոլոգիա, կոռուպցիա, կառավարման գաղափարախոսություններ եւ այլն: Այս բոլոր հարցերի վերաբերյալ շատ հետաքրքիր վերլուծություններ եւ քննարկումներ եղան, բայց բոլոր քննարկումների մեջ կարեւորվեցին հատկապես երկու թեմաներ ինտերնետի եւ գենետիկ հեղափոխությունները, որոնք հզոր ազդեցություն են ունենալու ամենամոտ ապագայում:

– Եթե կարելի է, ավելի մանրամասն նկարագրեք այդ հեղափոխությունների էությունը:

– Ինտերնետն արդեն երկար ժամանակ գոյություն ունի, սակայն հիմա արդեն հեղափոխական մասշտաբների է հասել: Դա հզոր մի ուժ է, որ արդյունավետ աշխատելու եւ այդ արդյունավետությունից շահավետ օգտվելու հնարավորություն է տալիս: Ամերիկայում ինտերնետ համակարգը ՀՆԱ-ի միայն 8 տոկոսն է կազմում, մինչդեռ վերջին տարիներին ապահովում է տնտեսական աճի 37 տոկոսը: Ինտերնետ համակարգը կարեւոր հնարավորություն է նաեւ Եվրոպայի եւ որոշ չափով Ասիայի համար: Եվ եթե մինչեւ հիմա դրանից օգտվել են հիմնականում զարգացած երկրները եւ որեւէ երկրի հարուստ խավը, ապա այս անգամ հարց դրվեց եւ քննարկվեց, թե ինչպես այդ հեղափոխությունից օգտվեն նաեւ զարգացող, թույլ երկրները եւ թույլ դասակարգը: Շատ կարեւոր է այնպիսի լծակներ օգտագործել, որ այս հեղափոխությունը բարելավում բերի ամենին, որ բոլորն էլ կարողանան օգտվել այս խաղաղ հեղափոխության բարիքներից:

Գենետիկ հեղափոխությունը կյանքի որակի բարելավում է խոստանում: Այսօր եւ մոտ ապագայում դրա միջոցով կարելի է բազմազան հիվանդություններ բուժել, վերականգնել օրգանիզմի վնասված տարբեր օրգանները, խաղողկեղից, ոսնդենից, հիմոթերապիայից վնասված մարմնամասները, ընդհանրապես, երկարացնել կյանքի տեւողությունը: Այստեղ եւս խնդիրն այն է, թե ինչպիսի լծակներ գործածել, որ այս հեղափոխությունից եւս օգտվեն ոչ միայն հարուստները եւ ոչ միայն հարուստ երկրներում, այլ նաեւ զարգացող երկրներում եւ թշվառ խավը: Սա այս թեմաները կարող է խոսք, հանգամանալի շոշափվեցին հանդիպումների ընթացքում, որտեղ ներկա էին նաեւ այդ համակարգի զարգացման ինստելեկտուալ առաջնորդները:

Հայաստանը, մասնակցելով այս համագումարին, կարող է ստեղծում, որոնք հնարավորություն են տալիս օգտվել այդ հեղափոխությունների արդյունքներից: Մենք կարող էինք չգնալ, բայց դա կկղզիացներ մեզ խաղից դուրս թողնելով, կդարձվեինք միայն մեր ներքաղաքական հարցերի շրջանակում եւ չէինք կարողանա օգտվել միջազգային ինստելեկտից, որը մեզ թե տնտեսապես, թե քաղաքականապես զարգացման հնարավորություն կտա: Կարեւոր մի փաստ անցյալ դարում տնտեսական համակարգի կառավարումը տարանջատված էր լիբերալ համակարգի, որը պաշտպանում էր անհատի շահերն ազատ շուկայական պայմաններում, եւ սոցիալ-դեմոկրատական համակարգի, որի գաղափարախոսությունը սոցիալական արդարությունն էր պետական միջամտությամբ: Այս երկու համակարգերը դոգմատիկ կերպով էին առաջնորդվում հաճախ ծնունդ տալով լուրջ բացասական հետեւանքների: Լիբերալ համակարգում դա անտառային, անտարբեր, լագեֆեր վերաբերմունքն էր թույլի նկատմամբ, հատկապես 20-ական թվականներին: Սոցիալ-դեմոկրատական համակարգում ոչ արդյունավետությունն էր, որովհետեւ բաշխումը սկսվում էր արտադրության փուլում, որն ի վերջո արգելակում էր կենսամակարդակի բարելավումը: Այս տարվա համագումարի մթնոլորտում արդեն շոշափելի էր այն միտումը, որ հեռանանք բացարձակ, դոգմատիկ տնտեսական փիլիսոփայություններից ավելի գործնական, պրագմատիկ դառնալով: Կարողանանք իրար հետ միահյուսել թե լիբերալ համակարգի արտադրողականության արդյունավետությունը եւ թե սոցիալ-դեմոկրատական համակարգի արդար բաշխման գաղափարը: Սա հնարավորություն կտա նվազեցնելու դասակարգային տարբերությունները: Այսինքն մրցակցային, արդյունավետ մոտեցում արտադրության ընթացքում, բայց արդար սոցիալական մոտեցում բաշխման ընթացքում: Այնպես որ, Հայաստանում մեզ համար էլ է կարեւոր որոշել, թե կկարողանա՞նք արդյոք կիրառել այս երկու գաղափարախոսություններն այնպես, որ նրանք չչեզոքացնեն ու ոչնչացնեն միմյանց, այլ դրանց միահյուսումից կարողանանք կերտել պետություն զարգացնող մի մոդել ըստ մեր ազգային հատկանիշների:

– Դա նշանակո՞ւմ է, որ Հայաստանը ձգտում է հետեւել այդ մոդելին:

– Ես այդման ուղղակի չէի կասի, սակայն պարզապես իմ եզրահանգումներն են, բայց ելնելով իմ տարիների փորձից կարծում եմ, որ դրա հեռանկարը կա, եւ այն ժողովուրդները, որոնք ճկուն են պահելով իրենց հիմնական գաղափարախոսությունը որպես անփոփոխ հիմք միաժամանակ կընդունեն եւ կադապտացնեն այն գաղափարախոսությունները, որոնք կօժանդակեն իրենց երկրի աճին եւ առաջընթացին: Այն երկրները, այն ազգերը, որոնք կկարողանան օգտվել այս հնարավորություններից, կարող են հաղթանակ տանել: Դավոսի համագումարը շատ խորը, հանգամանալի շոշափվեցին հանդիպումների ընթացքում, որտեղ ներկա էին նաեւ այդ համակարգի զարգացման ինստելեկտուալ առաջնորդները:

Հայաստանը, մասնակցելով այս համագումարին, կարող է ստեղծում, որոնք հնարավորություն են տալիս օգտվել այդ հեղափոխությունների արդյունքներից: Մենք կարող էինք չգնալ, բայց դա կկղզիացներ մեզ խաղից դուրս թողնելով, կդարձվեինք միայն մեր ներքաղաքական հարցերի շրջանակում եւ չէինք կարողանա օգտվել միջազգային ինստելեկտից, որը մեզ թե տնտեսապես, թե քաղաքականապես զարգացման հնարավորություն կտա: Կարեւոր մի փաստ անցյալ դարում տնտեսական համակարգի կառավարումը տարանջատված էր լիբերալ համակարգի, որը պաշտպանում էր անհատի շահերն ազատ շուկայական պայմաններում, եւ սոցիալ-դեմոկրատական համակարգի, որի գաղափարախոսությունը սոցիալական արդարությունն էր պետական միջամտությամբ: Այս երկու համակարգերը դոգմատիկ կերպով էին առաջնորդվում հաճախ ծնունդ տալով լուրջ բացասական հետեւանքների: Լիբերալ համակարգում դա անտառային, անտարբեր, լագեֆեր վերաբերմունքն էր թույլի նկատմամբ, հատկապես 20-ական թվականներին: Սոցիալ-դեմոկրատական համակարգում ոչ արդյունավետությունն էր, որովհետեւ բաշխումը սկսվում էր արտադրության փուլում, որն ի վերջո արգելակում էր կենսամակարդակի բարելավումը: Այս տարվա համագումարի մթնոլորտում արդեն շոշափելի էր այն միտումը, որ հեռանանք բացարձակ, դոգմատիկ տնտեսական փիլիսոփայություններից ավելի գործնական, պրագմատիկ դառնալով: Կարողանանք իրար հետ միահյուսել թե լիբերալ համակարգի արտադրողականության արդյունավետությունը եւ թե սոցիալ-դեմոկրատական համակարգի արդար բաշխման գաղափարը: Սա հնարավորություն կտա նվազեցնելու դասակարգային տարբերությունները: Այսինքն մրցակցային, արդյունավետ մոտեցում արտադրության ընթացքում, բայց արդար սոցիալական մոտեցում բաշխման ընթացքում: Այնպես որ, Հայաստանում մեզ համար էլ է կարեւոր որոշել, թե կկարողանա՞նք արդյոք կիրառել այս երկու գաղափարախոսություններն այնպես, որ նրանք չչեզոքացնեն ու ոչնչացնեն միմյանց, այլ դրանց միահյուսումից կարողանանք կերտել պետություն զարգացնող մի մոդել ըստ մեր ազգային հատկանիշների:

– Դա նշանակո՞ւմ է, որ Հայաստանը ձգտում է հետեւել այդ մոդելին:

– Ես այդման ուղղակի չէի կասի, սակայն պարզապես իմ եզրահանգումներն են, բայց ելնելով իմ տարիների փորձից կարծում եմ, որ դրա հեռանկարը կա, եւ այն ժողովուրդները, որոնք ճկուն են պահելով իրենց հիմնական գաղափարախոսությունը որպես անփոփոխ հիմք միաժամանակ կընդունեն եւ կադապտացնեն այն գաղափարախոսությունները, որոնք կօժանդակեն իրենց երկրի աճին եւ առաջընթացին: Այն երկրները, այն ազգերը, որոնք կկարողանան օգտվել այս հնարավորություններից, կարող են հաղթանակ տանել: Դավոսի համագումարը շատ խորը, հանգամանալի շոշափվեցին հանդիպումների ընթացքում, որտեղ ներկա էին նաեւ այդ համակարգի զարգացման ինստելեկտուալ առաջնորդները:

Հայաստանը, մասնակցելով այս համագումարին, կարող է ստեղծում, որոնք հնարավորություն են տալիս օգտվել այդ հեղափոխությունների արդյունքներից: Մենք կարող էինք չգնալ, բայց դա կկղզիացներ մեզ խաղից դուրս թողնելով, կդարձվեինք միայն մեր ներքաղաքական հարցերի շրջանակում եւ չէինք կարողանա օգտվել միջազգային ինստելեկտից, որը մեզ թե տնտեսապես, թե քաղաքականապես զարգացման հնարավորություն կտա: Կարեւոր մի փաստ անցյալ դարում տնտեսական համակարգի կառավարումը տարանջատված էր լիբերալ համակարգի, որը պաշտպանում էր անհատի շահերն ազատ շուկայական պայմաններում, եւ սոցիալ-դեմոկրատական համակարգի, որի գաղափարախոսությունը սոցիալական արդարությունն էր պետական միջամտությամբ: Այս երկու համակարգերը դոգմատիկ կերպով էին առաջնորդվում հաճախ ծնունդ տալով լուրջ բացասական հետեւանքների: Լիբերալ համակարգում դա անտառային, անտարբեր, լագեֆեր վերաբերմունքն էր թույլի նկատմամբ, հատկապես 20-ական թվականներին: Սոցիալ-դեմոկրատական համակարգում ոչ արդյունավետությունն էր, որովհետեւ բաշխումը սկսվում էր արտադրության փուլում, որն ի վերջո արգելակում էր կենսամակարդակի բարելավումը: Այս տարվա համագումարի մթնոլորտում արդեն շոշափելի էր այն միտումը, որ հեռանանք բացարձակ, դոգմատիկ տնտեսական փիլիսոփայություններից ավելի գործնական, պրագմատիկ դառնալով: Կարողանանք իրար հետ միահյուսել թե լիբերալ համակարգի արտադրողականության արդյունավետությունը եւ թե սոցիալ-դեմոկրատական համակարգի արդար բաշխման գաղափարը: Սա հնարավորություն կտա նվազեցնելու դասակարգային տարբերությունները: Այսինքն մրցակցային, արդյունավետ մոտեցում արտադրության ընթացքում, բայց արդար սոցիալական մոտեցում բաշխման ընթացքում: Այնպես որ, Հայաստանում մեզ համար էլ է կարեւոր որոշել, թե կկարողանա՞նք արդյոք կիրառել այս երկու գաղափարախոսություններն այնպես, որ նրանք չչեզոքացնեն ու ոչնչացնեն միմյանց, այլ դրանց միահյուսումից կարողանանք կերտել պետություն զարգացնող մի մոդել ըստ մեր ազգային հատկանիշների:

– Դա նշանակո՞ւմ է, որ Հայաստանը ձգտում է հետեւել այդ մոդելին:

– Ես այդման ուղղակի չէի կասի, սակայն պարզապես իմ եզրահանգումներն են, բայց ելնելով իմ տարիների փորձից կարծում եմ, որ դրա հեռանկարը կա, եւ այն ժողովուրդները, որոնք ճկուն են պահելով իրենց հիմնական գաղափարախոսությունը որպես անփոփոխ հիմք միաժամանակ կընդունեն եւ կադապտացնեն այն գաղափարախոսությունները, որոնք կօժանդակեն իրենց երկրի աճին եւ առաջընթացին: Այն երկրները, այն ազգերը, որոնք կկարողանան օգտվել

ՄԻՔԱԷԼ ԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Դավոսում կարեւորվեցին հատկապես ինտերնետի եւ գենետիկ հեղափոխության թեմաները

Հարցազրույց ՀՀ նախագահի խորհրդական Վահրամ Ներսիսյանցի հետ

Դավոսը միջազգային տնտեսական համագումար է, որը տեղի է ունենում ամեն տարի հունվարի վերջին-փետրվարի սկզբին եւ տեւում մոտ վեց օր: Այս համագումարին հրավիրվում են պետական բարձր պաշտոնյաներ, խոշոր ձեռնարկությունների նախագահներ, աշխարհահռչակ ակադեմիկոսներ, հայտնի հասարակական կազմակերպությունների նախագահներ, նաեւ հանրահայտ արվեստագետներ, այսինքն համբավ ունեցող, վաստակաշատ անձինք, որոնք միջազգային հեղինակություն են վայելում եւ ճանաչված են իրենց ինտելեկտի հզորությամբ: Բոլոր այս անձինք Դավոս են գալիս հրավիրյալի կարգավիճակով: Դավոսում քննարկումները լինում են բաց, թափանցիկ երկխոսությունների, բանավեճերի ձեւով: Սա Դավոսի 30-րդ տարեկան համագումարն էր, որին մասնակցում էր Հայաստանի պատվիրակությունը նախագահ Ռ. Քոչարյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էր նաեւ տնտեսական հարցերով նրա խորհրդական Վահրամ Ներսիսյանցը:

կարգի ճգնաժամին եւ այն տնտեսական, կառուցվածքային բարեփոխումներին, որոնք անհրաժեշտ էին այդ տնտեսությունները շտկելու եւ պարտքը վերակարգավորելու համար: 70-ականներին նավթի գների կտրուկ աճն էր դրա առաջացրած ցնցումները, որը թե զարգացող եւ թե զարգացած երկրներում տնտեսական անկայունություն էր առաջացրել, օրինակ ճգնաժամ առկա էր եւ Ամերիկայում ու Եվրոպայում, եւ Աֆրիկայում ու Ասիայում, թեպետ այս երկու խումբ երկրների խնդիրները տարբեր էին: Այս տարի այդպիսի ճգնաժամ չկար: Տնտեսությունը Ամերիկայում երկար ժամանակ շարունակաբար շատ լավ վիճակում է, Եվրոպայում վերելք է արձանագրում, ասիական տնտեսություններում եւս առկա է բարձր աճը, նույնիսկ Ռուսաստանում արդեն տնտեսական աճ կա, այնպես որ, այս տարի հարցերն ավելի շատ վերաբերում էին անցյալ դարից ժառանգած խնդիրներին չֆավորություն, սոցիալական արդարություն, էկոլոգիա, կոռուպցիա, կառավարման գաղափարախոսություններ եւ այլն: Այս բոլոր հարցերի վերաբերյալ շատ հետաքրքիր վերլուծություններ եւ քննարկումներ եղան, բայց բոլոր քննարկումների մեջ կարեւորվեցին հատկապես երկու թեմաներ ինտերնետի եւ գենետիկ հեղափոխությունները, որոնք հզոր ազդեցություն են ունենալու ամենամոտ ապագայում:

– Եթե կարելի է, ավելի մանրամասն նկարագրեք այդ հեղափոխությունների էությունը:

– Ինտերնետն արդեն երկար ժամանակ գոյություն ունի, սակայն հիմա արդեն հեղափոխական մասշտաբների է հասել: Դա հզոր մի ուժ է, որ արդյունավետ աշխատելու եւ այդ արդյունավետությունից շահավետ օգտվելու հնարավորություն է տալիս: Ամերիկայում ինտերնետ համակարգը ՀՆԱ-ի միայն 8 տոկոսն է կազմում, մինչդեռ վերջին տարիներին ապահովում է տնտեսական աճի 37 տոկոսը: Ինտերնետ համակարգը կարեւոր հնարավորություն է նաեւ Եվրոպայի եւ որոշ չափով Ասիայի համար: Եվ եթե մինչեւ հիմա դրանից օգտվել են հիմնականում զարգացած երկրները եւ որեւէ երկրի հարուստ խավը, ապա այս անգամ հարց դրվեց եւ քննարկվեց, թե ինչպես այդ հեղափոխությունից օգտվեն նաեւ զարգացող, թշվառ երկրները եւ թույլ դասակարգը: Շատ կարեւոր է այնպիսի լծակներ օգտագործել, որ այս հեղափոխությունը բարելավում բերի ամենին, հենց ինքն ընտրի իր ցանկացած համակարգը, այսինքն համակարգի ընտրությունը գա ներքուից, ոչ թե վերուից:

– Պրն Ներսիսյանց, ինչքան գիտեմ, անցած տարի որոշ կոնկրետ պայմանավորվածություններ ձեռք բերվեցին Դավոսի միջազգային ֆորումի ընթացքում նախագահի եւ խոշոր բիզնեսմենների միջեւ, օրինակ՝ «Անդրե գրուպի» հետ այդպիսի բանակցություններ եղան: Այս տարի եղա՞ն այդպիսի հանդիպումներ եւ պայմանավորվածություններ:

– Դավոսն այնպիսի համագումար չէ, որտեղ պայմանագրեր են կնքվում, եւ ավելի շուտ կարող ստեղծելու, հարցեր քննարկելու վայր է, հետագայում գործադիր մարմինները, նախարարությունները բանակցություններ են վարում, պայմանագրեր սորագրում եւ ծրագրեր իրականացնում: Դավոսն ավելի շուտ ցանցային կարող, ծանոթություններ ստեղծելու, տեղեկատվություն փոխանակելու վայր է ինտելեկտուալ շփումների, մտքերի զարգացման, իրարից սովորելու, այլոց փորձին ծանոթանալու միջավայր: Նախագահի գլխավորած պատվիրակությունը զանազան այսպիսի կարող ստեղծեց ու մշակեց դեպի Հայաստան ուղղակի ներդրումներ գրաստելու նպատակով:

– Դուք ընդհանրապես ինչպե՞ս եք տեսնում Հայաստանի մոտակա ապագան: Ե՞րբ Հայաստանը կարող է դուրս գալ ճգնաժամային իրավիճակից: Մենք արդեն տասը տարի անկախ պետություն ենք, եւ տասը տարի ժողովրդին խոստումներով են կերակրում, թե լավ կլինի, հիմա նախանշվո՞ւմ է ժամանակը, կարելի՞ է հստակ ասել, որ Հայաստանը դուրս կգա վերջապես այս տնտեսական ճգնաժամից:

– Հայաստանում տնտեսական ուղղությունը, ռազմավարությունը ես ընդունելի եմ համարում եւ պետք է ասեմ, որ հենց անկախության սկզբից էլ այդպիսին է եղել: Խնդիրը դա չէ, խնդիրն այդ ռազմավարության ճիշտ իրականացումն է, այսինքն պրոֆեսիոնալ իրականացումը, որը խիստ կապված է տնտեսական եւ գործադիր մարմնի կազմի հետ: Դժբախտաբար, այդ իրականացնող խումբը նախարարներն իրենց նախարարություններով, մեզ մոտ հազվադեպ են պրոֆեսիոնալ եղել եւ հաճախ առաջնորդվել են ոչ թե վրա մտածված որոշումներով պրոֆեսիոնալ չափանիշների փոխարեն, իսկ դա ծնունդ է տալիս փորձով առաջնորդվող համակարգի: Իսկ դա նախարարի փորձն է, ժողովրդի փորձանքը: Այս պայմաններում դժվար է արագ անցնել անցումային պահը, դրա համար պրոֆեսիոնալիզմ է պետք, իսկ դա հարկադրում է, որ լինի պետական պաշտոնյայի մասին օրենք եւ համակարգ: Ըստ դրա պետական պաշտոնյաներ նշանակվում են հստակ չափանիշներով պաշտոնյան պարտաս է տվյալ աշխատանքին, ազնիվ է եւ ունի համապատասխան փորձ: Փորձ ոչ միայն մասնագիտական առումով, այլեւ որպես հաջողակ կառավարիչ: Պետական պաշտոնյայի մասին օրենքի բացակայության դեպքում, ինչպես հիմա, պաշտոնյաները պրոֆեսիոնալիզմի չափանիշներով չեն նշանակվում, իսկ դա ծնունդ է տալիս ոչ պրոֆեսիոնալ աշխատանքի եւ կոռուպցիայի, որովհետեւ պետական պաշտոնյան, օրինակ նախարարը, աշխատանքի անցնելով պետական օրենքի եւ համակարգի բացակայության դեպքում, աշխատանքից կամայականորեն ազատում է բազմաթիվ աշխատողների եւ նշանակում իր անձնական հավատարիմներին: Երբ հավատարմությունն անձնական է, այլ ոչ պետական առիթ է ստեղծվում, հետեւանքում է կոռուպցիան, կաշառակերությունը եւ ոչ պրոֆեսիոնալ աշխատանքը: Այս պայմաններում ինչքան էլ ժողովուրդը, ԱԺ-ն բողոքեն, որեւէ բարելավում կամ դասակարգային համակարգով հարցեր լուծելու հնարավորություն չի լինի, որովհետեւ փաստեր չեն լինի չարաշահումները ժողովրդական սկզբունքներով հաստատելու համար: Եթե մենք չբուժենք այս ախտը, հնարավոր չի լինի արագ անցնել անցումային պահը: Եթե այդ պրոֆեսիոնալ համակարգը լիներ, հնարավոր էր կանխատեսել կամ կարծիք հայտնել, թե քանի տարի կտեւի անցումային փուլը: Մենք գիտենք, օրինակ, որ Չեխոսլովակիան, Լեհաստանը, Հունգարիան տասը տարում անցան այդ փուլը, բայց մեր պայմաններում դա դժվար է ասել: Ուրախ եմ, որ զանազան խոսակցություններից եւ ծնունդներից հետո արդեն պետական պաշտոնյայի մասին օրենքի գաղափարը սկսում է լուրջ քննարկվել, եւ թե նոր կառավարությունը, թե ԱԺ-ն այդ ուղղություններով աշխատանքներ են տանում: Հուսանք, որ այս անգամ կհաջողենք:

– Իսկ միգուցե որոշ պաշտոնյաների ձեռնտո՞ւ է, որ չընդունվի, ձգձգվի այդ պրոցեսը, որպեսզի չկորցնեն իրենց աթոռները:

– Դա արդեն ենթադրություն կլինի, ես ավելի շուտ շեշտը կդնեի դրականի վրա: Ես գիտեմ, որ դիմադրություններ կլինեն, անցյալում շատ նախարարներ գիտակցել են, որ այդ օրենքն իրենց բացարձակ ուժին վտանգ է ներկայացնում, ու թեեւ հաճախ խոսքով կողմ են ձեւացել, բայց իրականում այդ բարեփոխումները չեն արել: Հենց դրա համար էլ պետք է օրենքով կարգավորվի, քանի որ ներքին կարգով դրա կարգավորումը չի հաջողվի:

ՏԻԳՐԱՆ ՏԻՏՏԱՆԵՍՅԱՆ
Հայաստանում «Ինտերֆաքս»-ի թղթակից

ԱԶԳ

Միջազգային

Հեմաթոլահ Ղորբանի. «Իրանը միշտ հաստատակամ է եղել Հայաստանի հետ համագործակցության զարգացման խնդրում»

Այս օրերին Իրանում նշվում է Իսլամական հեղափոխության հաղթանակի 21-րդ տարեդարձը: Այդ կապակցությամբ «Նոյյան տապանի» թղթակից Սուսաննա Պետրոսյանը դիմեց ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության ժամանակավոր հավատարմատար պարոն Հեմաթոլահ Ղորբանիին Իրանին եւ հայ-իրանական հարաբերություններին վերաբերող մի շարք հարցերի պատասխանելու խնդրանքով:

- Ձեր կարծիքով, որո՞նք են Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո անցած տասնամյակներում Իրանի ժողովրդի առավել մեծ նվաճումները:

- Իրանի Իսլամական հեղափոխության կարեւորագույն նվաճումներից մեկը երկրի քաղաքական անկախությունն ու ժողովրդի իրական եւ ակտիվ մասնակցությունն է իր ճակատագրի եւ անկախության տնօրինման գործում: Դրա վկայությունն է հեղափոխությունից հետո տեղի ունեցած 21 ազատ ընտրություններին ժողովրդի ակտիվ մասնակցությունը: 1997 թ. նախագահական ընտրություններին մասնակցել է ժողովրդի 86 տոկոսը: Մեր ժողովրդի համար հեղափոխության ձեռքբերումներ են հանդիսանում սոցիալական արդարության հաստատումը, կեղեքման դեմ պայքարը, մարդկային բարձր արժեքների գնահատումը, ժողովրդի արժանապատվության պահպանումը: Իրանի Իսլամական Հանրապետությունը, ունենալով խաղաղության եւ բարեկամության ուղեծ, ափխարհի համայն ժողովրդին հղել է լարվածության թուլացման քաղաքականության, ժողովուրդների հարգման եւ քաղաքակրթությունների միջեւ երկխոսության կոչ: Հեղափոխության տնտեսական նվաճումներն էլ զգալի են մեր ժողովրդի համար: Դրանցից կարելի է հիշատակել արտասահմանից տնտեսական կախվածության նվազումը, տնտեսական ինքնապահովման քաղաքականության մշակումը եւ իրագործումը, ինչպես նաեւ տնտեսական համակողմանի զարգացումը: Խոշոր ներդրումներ են կատարվել տնտեսական ենթակառուցվածքներում՝ տրանսպորտի, գյուղատնտեսության, արդյունաբերության, էներգետիկայի եւ կապի բնագավառներում: Մի շարք ճյուղերում, բացի ներքին ինքնապահովումից, մեծ զարգացում է ապրել նաեւ արտահանումը:

- Ինչպե՞ս կգնահատեիք հայ-իրանական հարաբերությունների մակարդակը:

- Հայաստանի հետ Իրանի Իսլամական Հանրապետության կապերը ձեւավորվել են Հայաստանի անկախության առաջին տարիներից՝ երկու երկրների մշակութային հին եւ խոր արմատների հիման վրա, եւ այդ կապերը բնականոն ընթացք են ունեցել քաղաքական, տնտեսական եւ մշակութային բնագավառներում: Երկկողմ համագործակցության զարգացման համար երկու պետությունների իշխանությունների կամքը իր արտահայտությունն ստացել է բարձրաստիճան պատգամավորների փոխայցելությունների, բազմաթիվ պայմանագրերի ու համաձայնագրերի ստորագրման տեսքով: Տնտեսական համագործակցության ոլորտում հանդիպումների կազմակերպումը եւ առեւտրային-փոխադրական պատվիրակությունների փոխանակումը բնականոն ընթացք է ստացել: Իրանն ու Հայաստանը արդյունավետ համագործակցություն են ծավալել էլեկտրաէներգիայի փոխանակման բնագավառում եւ, կազմակերպելով ու մասնակցելով միմյանց առեւտրաարդյունաբերական ցուցահանդեսներում, լավ հայտեր են կատարել տնտեսական համագործակցության զարգացման ուղղությամբ:

1999 թ. երկու երկրներ փոխայցելություններ են կատարել մշակութային-մարզական 50 պատվիրակություններ, եւ այդ գործընթացը կշարունակվի:

- Ձեր կարծիքով, որո՞նք են համագործակցության առավել արդյունավետ բնագավառներն ու ոլորտները, եւ ինչպիսի՞ չօգտագործված հնարավորություններ կան:

- Իրանի Իսլամական Հանրապետությունն իբրեւ տարածաշրջանի ամենակարեւոր պետություն՝ նավթի ու գազի պաշարների, տրանսպորտի հիմնական ու ենթակառուցվածքային համակարգերի առկայության առումով, ունենալով անմիջական հարեւանություն Պարսից ծոցի, Մերձավոր Արեւելքի եւ Միջին Ասիայի երկրների հետ, ունենալով 70 միլիոնանոց բնակչությամբ շուկա եւ նպաստավոր պայմաններ իր տնտեսական ազատ գոտիներում, ունի շոշափելի հնարավորություններ ու կարողություններ, որոնք կարող են օգտագործվել որպես Հայաստանի տնտեսությունը լրացնող գործոններ: Երկու երկրներն իրենց տնտեսական համագործակցության զարգացման համար կարող են օգտվել Հայաստանում գիտատեխնիկական բարձր պոտենցիալից, մարդկային ափխատուժի բարձր կարողություններից եւ, ստեղծելով մանր ու միջին արտադրական համատեղ ձեռնարկություններ, իրենց ապրանքն արտահանել երրորդ երկրներ: Երկու երկրները կարող են համագործակցել նաեւ մասնագետների փոխանակման եւ գիտատեխնիկական կապերի զարգացման բնագավառում:

- Երկու երկրների համագործակցության շրջանակներում ի՞նչ միջոցառումներ եւ հանդիպումներ են նախատեսվում մոտ ապագայում:

- Հայաստանում շարունակվում են Իսլամական հեղափոխության հաղթանակի տարեդարձին նվիրված տոնական միջոցառումները: Շարունակվում են տնտեսական ու մշակութային պատվիրակությունների գործուղումները: Մոտ ապագայում Թեհրանում գումարվելու է Իրան-Հայաստան տնտեսական համատեղ հանձնաժողովի երրորդ լիագումար նիստը, իսկ ՀՀ վարչապետ մեծարգո պարոն Արամ Սարգսյանը կայցելի Իրանի Իսլամական Հանրապետություն: Առաջիկա ամիսներին Թեհրանում կազմակերպվելու են Հայաստանի մշակույթի օրեր, եւ ՀՀ մշակույթի, երիտասարդության եւ սպորտի հարցերի նախարարը մեկնելու է ԻԻՀ: Երկու պետություններն ունեն բազում ընդհանրություններ տարածաշրջանային ու միջազգային համագործակցության զարգացման համար, եւ Իրանի Իսլամական Հանրապետությունը միշտ հաստատակամ է եղել Հայաստանի հետ համակողմանի համագործակցության զարգացման խնդրում: Մշակութային հարուստ կապերի առկայությունը, հնագույն առնչությունները եւ երկու ժողովուրդների ցանկությունների իրագործման հրամայականը բազմապատկում է տարբեր բնագավառներում Իրան-Հայաստան համագործակցության զարգացման նշանակությունը:

ՍՈՒՍԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ,
«Նոյյան տապան»

Հանգիստ եւ գործնական բանակցություններ աֆղանական օդանավն առեւանգողների հետ

ԼՈՆԴՈՆ, 8 ՓԵՏՐՎԱՐ. ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Բրիտանական իշխանությունները երկրորդ օրն է շարունակում են բանակցությունները աֆղանական օդանավն առեւանգողների հետ, որը կանգնած է Լոնդոնին մերձակա Սթենսթեդ օդանավակայանում: Ինքնաթիռում գտնվում է 157 մարդ: Երկուշաբթի առեւանգիչներն ազատել են 8 պատանդների ի լրումն 23-ի, որոնց բաց էին թողել Տաջիկստանում, Ակտյուբինսկում եւ Մոսկվայում կանգառների ժամանակ: Ինչպես հաղորդում է բրիտանական ոստիկանությունը, բանակցությունները տեղի են ունենում հանգիստ եւ գործնական ոճով եւ կարող են տեւել մի քանի օր: Ամեն դեպքում ինքնաթիռին թույլ չեն տա թռչել օդանավակայանից: Թե քանի հոգի են առեւանգողները, դեռեւս հայտնի չէ: Հաղորդվում է միայն, որ նրանք լավ զինված են:

ՌՈՒՍՏԱՎԻ ԱՐՄԵՆՊՐԵՍ

Որոշ տվյալներով, առեւանգողները պահանջում են ազատ արձակել աֆղանական Հերաթի նախկին նահանգապետ Իսմայիլ Խանին, որը թալիբների կողմից ձերբակալվել է 1997 թվականին: «Թալիբան» շարժման ղեկավարությունը կտրականապես հրաժարվում է բանակցությունների մեջ մտնել առեւանգողների հետ:

ՄՈՍԿՎԱ

Ռուսաստանը պետք է պատշաճի իր դաշնակիցներին

Իսկ դաշնակիցները չա՞տ են

ՄՈՍԿՎԱ, 8 ՓԵՏՐՎԱՐ. ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: «Բելառուսը մեր դաշնակիցն է, եւ մենք պետք է պատշաճենք Բելառուսին», հայտարարել է ՌԴ նախագահի պատասխանատուն: Նրա խոսքերով, «դաշնակիցների նկատմամբ հոգատարությունը հոգատարություն է մեր սեփական անվտանգության նկատմամբ»: Պուտինը Ռուսաստանի դաշնակիցներ է համարում «առաջին հերթին ԱՊՀ երկրներին»: Ռուսաստանը դաշնակիցներ ունի նաեւ Եվրոպայում, եւ նրանք բավականին շատ են, նշել է նախագահի պատասխանատուն: Նաեւ, Պուտինի խոսքերով, «մեր դաշնակիցներ կարող են հանդիսանալ բոլոր նրանք, ովքեր ընդունում են բազմաբեւեռ աշխարհի շուրջ մեր պատկերացումները»: Անցյալ տարվա ամառվա դեպքերից հետո այդ մասին խորհել են նաեւ նախկին ԽՍՀՄ Կենտրոնական Ասիայի եւ Անդրկովկասի հանրապետությունները, նշել է Վլադիմիր Պուտինը:

ՌՈՒՍՏԱՎԻ ԱՐՄԵՆՊՐԵՍ

Նախկին խորհրդային երկրներին օգնելու համար առաջարկվել է 830 միլիոն դոլար

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 8 ՓԵՏՐՎԱՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Ըստ որոշ տվյալների, մոտավորապես 200 մարդ, որոնց թվում հիմնականում Նախիջեւանի ինքնավարության Նեգրամ գյուղի բնակիչներ, երկուշաբթի երեկոյան անկարգություններ են կատարել կուսակցության կենտրոնակայանի եւ լրագրի խմբագրության շենքի առջեւ փորել լուսամուտների աղակիները, փորձել են ջարդել մուտքի դուռը:

Նեգրամցիների զայրույթի պատճառ էր հանդիսացել «Ենի մուսավաթ» թերթում տպագրված հոդվածաշարը Նախիջեւանի մասին, որի մեջ, նրանց կարծիքով, աղավաղված էր ներկայացված ինքնավար հանրապետության իրավիճակը, այդ թվում եւ իրենց գյուղի: Նախիջեւանցիները իրենց համար վիրավորական էին համարել հոդվածաշարի հեղինակի «Ենի մուսավաթ» լրագրի թղթակից Էլբեյ Հասանլիի որոշ բացախոսություններ, որոնք վերաբերում էին ինքնավար հանրապետության կյանքի բարդություններին, իշխանությունների կամայականությանը եւ խմբագրությունից պահանջել էին պատշաճաթես ներողություն խնդրել:

Ինչ վերաբերում է լրագրողին, ապա երեւում է, որ նրա նկատմամբ արդեն միջոցներ ձեռնարկվել են: Անցած գիշեր նա ուղեկցվել էր Բաքվի շրջաններից մեկի ոստիկանության բաժանմունք, որտեղից ուղղակի ինքնաթիռով տեղափոխվել էր Նախիջեւան: Ինչպես հաղորդել են ներքին գործերի նախարարության աղբյուրներ, Նախիջեւանի դատարանը թույլտվություն է տվել հարցաքննելու Հասանլիին, եւ իրավապահ մարմինները կատարել են այդ կարգադրությունը:

Սակայն դա հարուցել է մամուլի ներկայացուցիչների վրդովմունքը, եւ Բաքվում հանրապետական ազդեցիկ հրատարակությունների խմբագիրների խորհուրդ է գումարվել, որը իշխանություններից պահանջել է ազատ արձակել «Ենի մուսավաթի» լրագրողին:

Խմբագրության վրա ձեռնարկված հարձակումը դատապարտել է նաեւ Ադրբեջանի գրահրատարակության նախարար Սիրուս Թեբրիզլին, որը «վրդովեցուցիչ» է անվանել լրագրողներին կալանելու փաստը:

Բաքվում հարձակում «Ենի Մուսավաթ» ազդեցիկ ընդդիմադիր թերթի խմբագրության վրա

ԲԱՔՈՒ, 8 ՓԵՏՐՎԱՐ. ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Ըստ որոշ տվյալների, մոտավորապես 200 մարդ, որոնց թվում հիմնականում Նախիջեւանի ինքնավարության Նեգրամ գյուղի բնակիչներ, երկուշաբթի երեկոյան անկարգություններ են կատարել կուսակցության կենտրոնակայանի եւ լրագրի խմբագրության շենքի առջեւ փորել լուսամուտների աղակիները, փորձել են ջարդել մուտքի դուռը:

Նեգրամցիների զայրույթի պատճառ էր հանդիսացել «Ենի մուսավաթ» թերթում տպագրված հոդվածաշարը Նախիջեւանի մասին, որի մեջ, նրանց կարծիքով, աղավաղված էր ներկայացված ինքնավար հանրապետության իրավիճակը, այդ թվում եւ իրենց գյուղի: Նախիջեւանցիները իրենց համար վիրավորական էին համարել հոդվածաշարի հեղինակի «Ենի մուսավաթ» լրագրի թղթակից Էլբեյ Հասանլիի որոշ բացախոսություններ, որոնք վերաբերում էին ինքնավար հանրապետության կյանքի բարդություններին, իշխանությունների կամայականությանը եւ խմբագրությունից պահանջել էին պատշաճաթես ներողություն խնդրել:

Ինչ վերաբերում է լրագրողին, ապա երեւում է, որ նրա նկատմամբ արդեն միջոցներ ձեռնարկվել են: Անցած գիշեր նա ուղեկցվել էր Բաքվի շրջաններից մեկի ոստիկանության բաժանմունք, որտեղից ուղղակի ինքնաթիռով տեղափոխվել էր Նախիջեւան: Ինչպես հաղորդել են ներքին գործերի նախարարության աղբյուրներ, Նախիջեւանի դատարանը թույլտվություն է տվել հարցաքննելու Հասանլիին, եւ իրավապահ մարմինները կատարել են այդ կարգադրությունը:

Սակայն դա հարուցել է մամուլի ներկայացուցիչների վրդովմունքը, եւ Բաքվում հանրապետական ազդեցիկ հրատարակությունների խմբագիրների խորհուրդ է գումարվել, որը իշխանություններից պահանջել է ազատ արձակել «Ենի մուսավաթի» լրագրողին:

Խմբագրության վրա ձեռնարկված հարձակումը դատապարտել է նաեւ Ադրբեջանի գրահրատարակության նախարար Սիրուս Թեբրիզլին, որը «վրդովեցուցիչ» է անվանել լրագրողներին կալանելու փաստը:

ԱԶԳ

Մշակույթ

Ներում խնդրելով բոլորի եւ ամեն ինչի համար

Դոստոեւսկու ծննդյան օրվա առիթով

1866 թ. փետրվարի 18-ին բարոն Ա. Ե. Վրանգելին ուղղված նաճակում նա գրում է. «Մարդը երջանկության համար չի ծնվում: Մարդը վաստակում է երջանկությունը ու միշտ էլ տառապանքով: Այստեղ ոչ մի անարդարություն էլ չկա, որովհետեւ կենսական կոչումն ու գիտակցությունը (այսինքն՝ մարմնով եւ ոգով, այսինքն կենսական ողջ որոշեսով անմիջականորեն զգացվածը) ձեռք է բերվում pro եւ contra փորձով, որը պետք է կրել: Տառապանքով է ձեռք բերվում այդպես է մեր մոլորակի բագրած վերջնական տեսքի մեջ) պատասխանելով Ռասկոլնիկովի այն դիտողությանը, թե Աստված գուցե չկա, Սարմելադովն ասում է. «Այսինքն Աստված չկա ու նրա գալուստը չի լինի... այդ դեմքով... այդ դեմքում... անկարելի է ապրել... Չափազանց գազանավարի վիճակ կլինի... Այդ դեմքում ես էլ անմիջապես կընկնեի Նեւա գետը: Բայց, հարգելի պարոն, այդ կլինի, այդ խոստացված է ապրողների համար, այլապես մեզ համար էլ ի՞նչ, ի՞նչ կմնա... Ով էլ որ լինի ապրողը, թե կուզեւ մեղքի մեջ կորած, սակայն ձեր կյանքը երկրի վրա եւ ի՞նչ եզրակացրիք դրա մասին», մարդը կարող էր լռելյայն մեկնել Դոն Կիխոտը: «Սիա իմ եզրակացությունը կյանքի մասին, եւ կարո՞ղ եք ինձ դատապարտել դրա համար»): Ուրեմն որքան հզոր պետք է լինես, որ այսքանից հետո կարողանաս նստել գրասեղանի մոտ ու մի նոր Դոն Կիխոտի կերպար ստեղծես: Դոստոեւսկին արեց այդ բանը: Իշխան Միշկինը նոր ժամանակների ասպետը դարձավ իր մեջ մարմնավորելով մարդու իդեալական բոլոր հատկանիշները...

...Բայց դեռ պետք է գար առավել հզորը «Կարամազով եղբայրները»: Այս վեպի մասին այնքան է գրվել, որ իմ խոսքն ավելորդ կրկնություն կլինի: Միայն ուզում եմ վեպի յոթերորդ «Այլոշա» գրքից մի մեջբերում անել:

«Նա չգիտեր, թե ինչու է գրկում երկիրը, չէր կռահում, թե ինչու այնպես անդիմադրելիորեն ուզում է համբուրել այն, համբուրել ամբողջությամբ, բայց համբուրում էր արտասվելով, հեկեկալով, իր արցունքներով էր ողողում երկիրը եւ հափշտակությամբ երդվում էր սիրել այն, սիրել հավիտյանս հավիտենից: «Թրջիր երկիրն արցունքներով քո ուրախության ու սիրիր այդ արցունքները քո...», ինչեց նրա հոգում: Վասն ինչի՞ էր արտասվում նա: Օ՜, իր ցնծության մեջ արտասվում էր նույնիսկ այդ աստղերի վրա, որոնք փայլփլում ու նայում էին իրեն տիեզերքի անհունից, եւ «չէր ամաչում այդ հափշտակությունից»: Աստծո բոլոր այդ անհամար աշխարհներից հանկարծ թելեր էին կարծես ի մի եկել իր հոգում, եւ ամբողջովին թրթռում էր իր հոգին, «հաղորդակցվելով այլ աշխարհների հետ»: Տենչում էր ներել բոլորին ու ամեն ինչի համար, եւ ներումն խնդրել, օ՜, ոչ թե իր համար խնդրել, այլ բոլոր մարդկանց, ընդհանուրի եւ ամեն ինչի, իսկ «ինձ համար ուրիշներն էլ են խնդրում», հնչեց նորից նրա հոգում: Բայց վայրկյան առ վայրկյան նա զգում էր հայտնաբար ու կարծես շոշափելիորեն, թե այդ երկնակամարի պես հաստատուն ու անսասան մի բան իջնում ու տիրում էր իր հոգուն: Ասես մի գաղափար գահակալում էր իր մտքում ու ցկյանս արդեն ու հավիտյանս հավիտենից: Որպես մի տկար պատանի նեսվել էր երկիր պագանելու, բայց ոտքի ելավ որպես ցկյանս հաստատակամ մի մարտիկ...»:

Այլոշա Կարամազովի՞ մասին է այս խոսքը, թե՞ հենց իր:

Այսպիսի հզոր վեպեր հազվադեպ են ստեղծվում, այն էլ՝ մեծագույն ներշնչումների ժամանակ: Եվ պատահական չէ, որ վեպը նվիրված է ամենամոտ, ամենասիրելի, ամենաթանկ մարդուն՝ Աննա Սնիտկինային, այն կնոջը, որը ոչ միայն սղագրող էր (Դոստոեւսկին նրան թելադրեց «Խաղամոլը» վեպը), կին, նրա զավակների մայրը, նրա գործերի կառավարիչը... Այսպիսի միասնություն, այսպիսի հոգեկան կապ հազվադեպ է պատահում: Ու եթե կրկին հիշենք երջանկության մասին իր խոսքը, ապա նա իսկապես երջանիկ մարդ էր, երջանկություն վաստակած մարդ, երջանկության հասած մարդ...

Իր խոսքի նմանությամբ ասենք իր մասին. եթե երբեւէ ուրիշ մոլորակից եկած մեկը փորձի իմանալ, թե ինչ է մարդը, ապա խորհուրդ կտանք կարդալ Ֆեոդոր Դոստոեւսկի:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

ՍՓՅՈՒՌՔ

Կիպրահայ ջութակահարը բրիտանական կայսերական շքանշանակիր

Նիկոսիայից մեր թղթակից Տոքթ Տեր Բարթողը տեղեկացնում է, որ կիպրահայ ջութակահար Լեւոն Չիլինգիրյանը, «երաժշտական արվեստին մատուցած իր ծառայությունների» համար, արժանացել է Բրիտանական կայսրության օրդերի դափնեկրի կոչմանը: Այդ մասին հայտարարել է Անգլիայի թագուհին Նոր տարվա նախօրյակին հրապարակելով պարգեւների արժանացածների տարեկան ցուցակը: Չիլինգիրյանը, որը Բուլինգհեմյան պալատ է ներկայանալու պատվավոր կոչման առթիվ, երկրորդն է իր զարմիկ Հարո Բեդելյանից (դարձյալ կիպրահայ) հետո, որը մի քանի տարի առաջ նման կոչման արժանացել էր որպես ինժեներ-շինարար՝ ստորջրյա «Չեն» բունելի կառուցումը վերահսկելու համար:

Լեւոն Չիլինգիրյանը ծնվել է Նիկոսիայում 1948-ին, երաժշտական ընտանիքում: Ծնողները Աղանայից են գաղթել Կիպրոս: Հայրը՝ Նորայրը, կոստանդնուպոլսում երգահան է եղել եւ երգչախումբ է ղեկավարել: Տուրակի հետ 5-ամյա Լեւոնի ծանոթացմանը նպաստել է մեծ մորեղբայրը՝ Վահան Բեդելյանը, որը նույնպես մեդալի է արժանացել թագուհու կողմից 1952-ին գահակալության առթիվ: Վահանի որդին Հարությունը, 21 տարեկանում BBC-ի ջութակի առաջնության հաղթող է ճանաչվել:

Կիպրոսում Լեւոնի համար նշանակալի փաստն այն էր, որ իր երջարատի երիտասարդներն այդ տարիներին ջութակի կամ դաշնամուրի դասեր էին վերցնում իր ազգականներից: Դա խթանել էր խորանալու երաժշտության աշխարհում: Հետագայում, երբ Լեւոնի ընտանիքը Լոնդոն է տեղափոխվում, նա կորցնում է կապվածությունը երաժշտությանը, եւ փոխարենը սկսում տարվել ֆուտբոլով: Միայն մեծ մորեղբոր այցը Լոնդոն սթիրում է նրան վերադառնալ իր նախասիրությանը: Սովորում է երաժշտության արքայական քոլեջում, որտեղ հիմա որպես պրոֆեսոր (ստացել է FRCH կոչումը) դասավանդում է: Չիլինգիրյան քառյակի ստեղծման առթիվ արժեքավոր խորհուրդներ է ստանում Ամադեուս քառյակի ղեկավար Զիգմունդ Նիսելից եւ երաժշտագետ Հանս Քելլերից: Արքայական քոլեջում սովորելու տարիներին նա մտերմանում է դաշնակահար Կլիֆորդ Բենսոնի հետ եւ երկուսով 1969-ին BBC-ի բեթհովենյան առաջնությունում, իսկ այնուհետեւ 1971-ին մյունխենյան դուոյում առաջին տեղն են զբաղեցնում:

Չիլինգիրյան քառյակը Լիվերպուլի եւ Սասեքսի համալսարաններին կից գործելուց հետո այժմ սերտորեն համագործակցում է արքայական քոլեջի հետ: Միջազգային մակարդակներով ամենաակտիվ, ամենահեղինակավոր եւ ամենափնտրված քառյակն է, որն աշխարհի ավելի քան 50 երկրներում հանդես է եկել մեծ հաջողությամբ եւ որին «Բոստոն Գլոբը» ժեր ժամանակների լավագույն քառյակ է կոչել: Իսկ «Բալեր Տայմսը» առաջին հարվածներից միջազգային մակարդակ բառերով է նկարագրել նրա կատարումները, որոնք Մոցարտի, Բեթհովենի, Հայդնի, Շուբերտի, Ռավելի եւ այլոց շարքում ընդգրկում են նաեւ Կոմիտասին եւ Ալալամազյանին:

Լեւոն Չիլինգիրյանը վերջերս դարձել է էվեղական «Քամերատա ռոմանի» լարային համույթի երաժշտական տնօրենը: Ամուսնացած է եւ ունի մեկ որդի՝ Ստեփան անունով: Կինը՝ Սյուզան Պաստին (կես հայ, կես ամերիկացի), կիպրահայ եւ լոնդոնահայ համայնքների վերաբերյալ դոկտորական թեզ է պաշտպանել:

Հ. Օ.

Բոստոնում հնչեց հայկական սիրային քնարերգություն

Բոստոնի հանրային գրադարանում հավաքված արվեստասերները Նոր տարվան նվիրված «Առաջին գիշերը» ծրագրի շրջանակներում ծանոթացան հայ սիրային քնարերգությանը: Բանաստեղծությունները թարգմանել էր եւ ընթերցեց բանաստեղծուհի Դայանա Տեր-Հովհաննիսյանը՝ նվագակցությամբ Ջեֆ Ռոբինսոնի (սաքսոֆոն) եւ Սթան Սթրիլանդ երգչի:

Երաժշտությունը հայկական չէր, ունկնդիրը հայ չէր, սակայն Մինակ Մեծարենցի, Քուչակի, Թեքեյանի, Կապուտիկյանի, Մեսախեի եւ Մկրտչյանի բանաստեղծություններն ընդունվեցին ջերմորեն:

Համերգ՝ զոհերի հիշատակին

Երգեհոնահարների ամերիկյան միության Դետրոյթի մասնաճյուղի՝ վերջերս Լյութերական եկեղեցում տված «Գոյատեւման երգեր» ծրագիրը՝ կազմված երաժշտությունից ու բանավոր խոսքից, նվիրված էր բոլոր նրանց, ովքեր տուժել են մարդու անմարդկային վերաբերմունքից, տառապել ու տանջահար են արվել հրեաների Հոլոքոստից մինչեւ Հայոց եղեռնը, ամերիկյան սեւամորքների սրկացումից մինչեւ անմեղ մանուկների ոչնչացումը: Ծրագրին հատուկ հյուրի կարգավիճակով ներկա էին սենատոր Ստեֆան Դուբովը, երգիչ Անջե Սմիթը եւ պատմաբան Ալիս Բերբերյան-Հեյդությանը:

THE ARMENIAN MIRROR SPECTATOR

ԱՍՏՂԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Միլեն Ֆարմերի մրցանակները

Ամերիկյան NRJ ռադիոկայանն առաջին անգամ անցկացրեց երիտասարդությանը հասցեագրված երաժշտության մրցույթ, որի հաղթողին որոշելու էին իրենք՝ ունկնդիրները, հաշվի առնելով երգիչ-երգչուհիների ընդհանուր ավանդը երաժշտական կյանքում: Երիտասարդ ունկնդիրների կարծիքները նկատի ունենալով, ռադիոկայանի ղեկավարությունը երեք գլխավոր մրցանակներն էլ շնորհեց երգչուհի Միլեն Ֆարմերին: Դրանք շնորհվեցին լավագույն երաժշտական ալբոմի, լավագույն համերգի եւ լավագույն արտիստական դրսեւորման համար: Ինչպես նշում է «Պուեն» հանդեսը, մրցանակներն ստանալու համար երգչուհին Լոս Անջելես էր ժամանել մասնավոր ինքնաթիռով՝ 30 անձանց ուղեկցությամբ: Ժպտադեմ Ֆարմերը հագել էր լայն լանջաբացվածքով սեւ հագուստ, որը թերեւս ավելի սազական կլիներ գեղանի Պամելա Անդերսոնին:

Պ. Բ.

ԱԶԳ

Մարզական

ՖՈՒՏԲՈԼ

«Արարատը» կձգտի բարելավել իր ցուցանիշը

Շուրջ մեկուկես ամիս է մնացել հանրապետության 9-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարի մեկնարկին, որին ֆուտբոլային թիմերը նախապատրաստվում են ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ:

Երեւանի «Արարատի» ֆուտբոլիստներն առաջիններից էին, որ կարճատեւ արձակուրդից հետո դեռեւս դեկտեմբերի 20-ից ձեռնամուխ եղան նոր մրցաշրջանի նախապատրաստական աշխատանքներին: Առաջին պարապմունքները հիմնականում նպատակաուղղված էին ֆուտբոլիստների ուժերի վերականգնմանը: Իսկ հունվարի սկզբներից արարատցիները գլխավոր մարզիչ Արկադի Անդրեասյանի եւ նրա օգնական Սամվել Սարգսյանի գլխավորությամբ օրական երկու պարապմունք են անցկացնում ասիճանաբար մեծացնելով մարզումների ծանրաբեռնվածությունը: Եթե մարզումների առաջին փուլում հիմնական ուշադրությունը դարձվում էր տղաների ֆիզիկական պատրաստությանը, արագաուժային որակների բարելավմանը, արդա այժմ պարապմունքներում մեծ տեղ է հատկացվում տեխնիկական պատրաստությանը, գնդակով վարժություններին: Պարապմունքներն անց են կացվում ինչպես բացօթյա, այնպես էլ մարզադահլիճում: Նախապես ծրագրված էր նախապատրաստության երկրորդ փուլը հունվարի 24-ից անցկացնել Ծաղկաձորում, սակայն տեղացած առատ ձյունը փոխեց ակումբի ղեկավարների որոշումը: «Արարատը» նախընտրեց մնալ Երեւանում եւ ուսումնամարզական հավաք կազմակերպել «Երեբունի» հյուրանոցում:

Նախորդ տարվա համեմատ «Արարատի» կազմն առանձնակի փոփոխության չի ենթարկվել: համալրվելով մի քանի փորձառու ֆուտբոլիստներով: Մարզումներին մասնակցում են «Երեւանից» տեղափոխված Վարազդատ Ավետիսյանն ու Սուրեն Չախալյանը, ինչպես նաեւ որոշ ընդմիջումից հետո հարազատ կոլեկտիվ վերադարձած Արա Նիգոյանն ու Համլետ Մխիթարյանը: Արկադի Անդրեասյանը հուսով է, որ փորձառու այս ֆուտբոլիստները զգալիորեն կամրապնդեն թիմի կազմը: Ընդհանրապես, այսօր «Արարատում» բավական սուր մրցակցություն է ծավալվել խաղային յուրաքանչյուր դիրքի համար: Փաստորեն, «Արարատը» հնարավորություն ունի գրեթե հավասարազոր երկու կազմ ասպարեզ դուրս բերել: Ի դեմ, այդպես վարվեցին թիմի մարզիչներն անցկացրած սուզողական հանդիպումներում: Արարատում «Ցեմենտի» հետ խաղի առաջին կեսում հանդես եկավ թիմի մի կազմը, որը խաղակեսը շահեց 2-0 հաշվով, իսկ ընդմիջումից հետո «Արարատի» մարզիչները խաղադաշտ դուրս բերեցին այլ ֆուտբոլիստների: Խաղն ավարտվեց ոչ-ոքի (2-2): Անցած հանգստյան օրերին «Արարատը» եւս երկու խաղ անցկացրեց տարբեր կազմերով առավելության հասնելով «Զվարթնոցի» (4-2) եւ «Դինամոյի» (3-0) նկատմամբ:

Նախապատրաստական փուլում թիմի մի քանի խաղացողներ մեկնել էին փորձաշրջանի: Արսեն Ավետիսյանն ու Արշակ Ամիրյանը «Ռոստելմաշ», Հարություն Աբրահամյանը Իսրայել: Այժմ նրանք միացել են իրենց խաղընկերներին եւ շարունակում են մարզումները: Բացառված չէ, որ նախորդ տարվա նման «Արարատում» լեգեոնականներ հայտնվեն: Սակայն, ըստ Արկադի Անդրեասյանի, դա հնարավոր է միայն այն դեպքում, եթե լեգեոնականներն իրոք մի քանի գլխով բարձր լինեն արարատցիներից: Հակառակ դեպքում, ավելի լավ է հենվել տեղի ֆուտբոլիստների վրա:

«Արարատի» առջեւ նոր մրցաշրջանում էլ բարդ խնդիրներ են դրված. պայքարել գավաթի, իսկ առաջնությունում բարձր տեղերի համար: Գլխավոր մարզիչը գտնում է, որ նախ եւ առաջ պետք է պահպանել անցած տարվա նվաճած դիրքերը եւ փորձել գերազանցել ցուցանիշը արժանանալով երկրի չեմպիոնի կոչմանը:

Նախապատրաստական ավարտական փուլն «Արարատը» նախորդ տարվա նման կանցկացնի Սոչիում փետրվարի 20-ից: Այստեղ կայանալիք սուզողական հանդիպումներն էլ հնարավորություն կընձեռեն կարգավորելու խաղային օղակների համագործակցությունը, վերջնականապես որոշելու թիմի հիմնական կազմը:

ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կիսաեզրափակիչի մասնակիցները որոշվեցին

Ֆուտբոլի Աֆրիկայի գավաթի խաղարկությունում անցկացվեցին քառորդ եզրափակիչ փուլի բոլոր խաղերը, եւ որոշվեցին այն չորս ուժեղագույնները, որոնք շարունակում են պայքարը: Կամերունի եւ Հարավաֆրիկյան Հանրապետության հավաքականներին միացան Նիգերիայի եւ Թունիսի հավաքականները: Թունիսցիներն անսպասելի հաղթանակ տարան մինչ այդ Աֆրիկայի չեմպիոնի կոչումը կրող Եգիպտոսի հավաքականի նկատմամբ՝ 1-0: Միակ գոլը 11 մ տուգանային հարվածով խփեց Խալիդ Բադրան: Շաբաթ համառ պայքարում անցավ նաեւ Նիգերիա-Վենեզուելա հանդիպումը: Միայն լրացուցիչ ժամանակում Նիգերիացիները «պոկեցին» հաղթանակը՝ 2-1:

Այժմ վաղը կայանալիք կիսաեզրափակիչ խաղերում կմրցեն Կամերուն-Թունիս եւ ՀԱՀ-Նիգերիա զույգերը:

Մարադոնան կաջակցի Կուբային

Արգենտինացի նշանավոր ֆուտբոլիստ Դիեգո Մարադոնան այժմ գտնվում է Կուբայում: Նա այստեղ բուժվում է նարկոմանիայից եւ, որպես շնորհակալություն, ուզում է օգնել այդ երկրին: Մարադոնան հայտարարել է, որ պատրաստ է համագործակցել Կուբայի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ եւ երկրի հավաքականին օգնել, որպեսզի նա աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի մասնակից դառնա: Մեկ տարի առաջ Մարադոնայի միջոցներով 12 հազար 500 գնդակ էր գնվել տեղի դպրոցների համար, ինչպես նաեւ համարյա հազար խաղադաշտերի ու խաղահրապարակների շինարարություն էր սկսվել: Արգենտինացին պատրաստվում է նաեւ ներկա գտնվել Կուբայի առաջնության վերջին տուրի խաղին:

ԳԵՂԱՍՄԱՀՔ

Նաեւ՝ Հայաստանի մարզիկները

Վիեննայում մեկնարկել է գեղասահքի Եվրոպայի առաջնությունը:

Մրցումների մասնակիցների թվում են նաեւ Հայաստանի ներկայացուցիչները: Արդեն 5-րդ անգամ աշխարհամասի առաջնությունում հանդես կգա Մարինա Կրասիլցեւա-Արսյոմ Զնայկով սպորտային զույգը: Պարային զույգերի մրցաշարին կմասնակցի Տիֆանի Հայդեն-Վազգեն Ազրոյան երկյակը: Ի դեմ, վերջին զույգը մարզվում է նշանավոր մասնագետներ Նատալյա Լինիչուկի եւ Գենադի Կարպանոսովի գլխավորությամբ: Ավստրիայի մայրաքաղաքում ընթացող առաջնությունում հանդես կգա նաեւ մենասահորդուհի Յուլյա Լեբեդեւան:

Առաջին օրվա պայքարից հետո սպորտային զույգերի մրցումները գլխավորում են ռուս մարզիկները: Առաջին տեղում Մարիա Պետրովան եւ Ալեքսեյ Տիխոնովն են, երկրորդում՝ Ելենա Բերեժնայան եւ Անտոն Սիխարուլիձեն: Տղամարդկանց մենասահքում լարված մրցակցություն է սպասվում

երկու պետերբուրգցիների՝ Ալեքսեյ Յագուդինի եւ Եվգենի Պլուշչենկոյի միջեւ: Հենց նրանք էլ առաջատար են դարձել նախնական փուլից հետո:

ԼՈՒՐԵՐ

«Բոլոր աստղերի» 50-րդ մրցախաղը

Տորոնտո քաղաքում անցկացվեց Հոկեյի ազգային լիգայի (NHL) «Բոլոր աստղերը» հոբելյանական՝ 50-րդ մրցախաղը: Արդեն մի քանի տարի է, ինչ մրցող թիմերը կազմվում են Հյուսիսային Ամերիկա եւ աշխարհի հավաքական սկզբունքով: Այս մրցախաղը վերածվեց ռուս հոկեյիստ Պավել Բուրեի բենեֆիսի: «Ռուսական հրթիռը» 3 տափօղակ ուղարկեց Հյուսիսային Ամերիկայի հավաքականի դարպասը: Ընդ որում, երկու անգամ արդյունավետ փոխանցում կատարեց Վալերի Բուրեն: Հետաքրքիր է, որ եղբայրներն-առաջին անգամ էին հանդես գալիս միեւնույն թիմում: Աշխարհի հավաքականը վստահ հաղթանակ տարավ այդ խաղում: Շատ խոսուն է հաշիվը՝ 9-4:

Իվան Գլինկան՝ «Պիտսբուրգի» մարզիչ

Նշանավոր մարզիչ Իվան Գլինկան պայմանագիր է կնքել NHL-ի ուժեղագույն թիմերից մեկի՝ «Պիտսբուրգ պինգվինզի» հետ: Մարզասերներին հիշեցնենք, որ հենց Գլինկայի գլխավորությամբ Չեխիայի հավաքականը 1998-ին նվաճեց Նագանոյի օլիմպիական խաղերի չեմպիոնի կոչումը: Ի դեմ, «Պիտսբուրգի» խաղացողների կեսը չեխեր ու ռուսներ են, այնպես որ թիմի խաղաոը շատ մոտ է եվրոպականին: Գլինկան առաջին եվրոպացին է, որ NHL-ի թիմ պետք է մարզի: Նա «Պիտսբուրգը» կգլխավորի հաջորդ մրցաշրջանից:

Եվրալիգայի գավաթը՝ «Մեսալուրգին»

Շվեյցարիայի Լուգանո քաղաքում անցկացվեց հոկեյի եվրալիգայի խաղարկության եզրափակիչ մրցաշարը, որտեղ հանդես եկան 4 ակումբային թիմեր:

Կիսաեզրափակիչ խաղերից մեկում «Սպարտա» (Չեխիա) թիմը 3-2 հաշվով հաղթեց «Լուգանոյին» (Շվեյցարիա), «Մեսալուրգը» (Ռուսաստան) 5-3 հաշվով՝ ՏՊՍ-ին (Ֆինլանդիա): Վճռական խաղում «Մեսալուրգը» 2-0 հաշվով հաղթեց «Սպարտային» եւ նվաճեց գլխավոր մրցանակը: Երկու գոլն էլ խփեց Անդրեյ Ռազինը: Ավելացնենք, սա Մագնիտոգորսկի թիմի երկրորդ անընդմեջ հաղթանակն է եվրալիգայի խաղարկությունում: Մրցումներում երրորդ տեղը գրավեց ՏՊՍ-ն, որը 6-1 հաշվով պարտության մատնեց «Լուգանոյին»:

Ռուսաստանի թիմի հաղթանակը

Կազանում անցկացվեց գնդակով հոկեյի միջազգային մրցաշար, որտեղ խաղարկվեցին ՈԴ կառավարության մրցանակները: Թաթարստանի մայրաքաղաքում անցկացված խաղերը շատ մեծ հետաքրքրություն էին առաջացրել: Գլխավոր մրցանակը նվաճեց Ռուսաստանի հավաքականը, որը եզրափակիչում 10-4 հաշվով հաղթեց Թաթարստանի թիմին: 3-րդ տեղի համար պայքարում Շվեդիան 5-4 հաշվով պարտության մատնեց Ֆինլանդիային:

Ռոմմեն եւ Պիխշտեյնը՝ չեմպիոններ

Միլուոկիում (ԱՄՆ) անցկացվեց չմշկավազքի դասական բազմամարտի աշխարհի առաջնությունը: Տղամարդկանց մրցակցությունում ուժեղագույնի կոչումը նվաճեց Ջանի Ռոմմեն (Հոլանդիա): Իսկ աշխարհի չեմպիոնուհու կոչմանն արժանացավ Կլաուդիա Պիխշտեյնը (Գերմանիա): Նա կարողացավ առաջ անցնել իր հռչակավոր հայրենակցուհի Գունդե Նիման-Շթիրնիեմանից:

ԲԱԺԻՆԸ ՎԱՐՈՒՄ Է ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Մելանին: 2. Գինզբուրգ: 3. «Դիլմա»: 4. Գալբա: 5. «Կալիգուլա»: 6. Դիրիժոր: 9. «Թենի»: 10. Աղլեր: 16. Էվանս: 17. Ռաբաթ: 21. Կորոլով: 23. Անատոլիա: 24. Ալյումին: 25. Սիլվա: 26. Մարսո: 27. Սանդերֆ: 31. Օրիոն: 32. Վալես:

Հորիզոնական

7. Ֆերիսին: 8. Պարագիս: 11. Թանգիմաթ: 12. Դոբրինին: 13. Պիկուլ: 14. Էնվեր: 15. Կուլոն: 18. Ագավա: 19. Կաֆավ: 20. Ականջ: 22. Դալաս: 28. Էլորա: 29. Խիդար: 30. Կասար: 33. Բոլտերով: 34. Ակայորդի: 35. Սիբոնով: 36. Սելիտրա:



Ուղղահայաց

1. Պետություն Եվրոպայում: 2. Հեռուստացույցի մաս: 3. Ուժեղ գլխացավ: 4. Կանացի անուն: 5. Հացազգի բույս: 6. Հայ լեզվաբան: 9. Աշխարհահռչակ հայ մարմնամարզիկ: 13. Ըստ հունական դիցաբանության ռազմիկ կին: 14. Ընկնավորություն, ...: 16. Ծաղկի կենտրոնում գտնվող իգական օրգան: 17. Հայ միջնադարյան հոգեւոր երգի տեսակ: 22. Տիեզերական մարմին: 23. «Անաս բարով, Գյուլսարի» վիպակի հեղինակը: 25. Մարդկանց մահաղաստի ենթարկելու հարմարանք: 28. Սպորտածեւ: 29. Ֆրանսիացի մոդելյոր: 30. Հրահեղուկ զանգված: 32. Թուրքական բաղնիք:

Հորիզոնական

7. Արյան սպիտակ գնդիկներ: 8. Հայ գրականագետ: 10. Երկաթբետոնե կառուցվածքների մեծաղյա կմախք: 11. Տան կտուրին թողած անցք: 12. Չորացրած բույսերի հավաքածու: 15. Ճարպուռուցք: 18. Գույն: 19. Հայազգի կինոռեժիսոր: 20. Գեղարվեստական ստեղծագործության տեսակ, որը հիմնված է չափազանցությունների վրա: 21. Վարդազգի թուփ: 24. Հայ կենսաֆիզիկոս, դեղաբան: 26. ԱՄՆ-ի նահանգներից: 27. Ցիանաջրածնական թթվի աղ: 31. Հայ ֆիզիոլոգ: 33. Ըստ աստվածաշնչյան ավանդության արաբների նախահայր Իսմայելի մայրը: 34. Քաղաք Շվեյցարիայում: 35. Թաղամաս Փարիզում: 36. Պղնձի դարի հնավայր Երեւանում:

Կազմեց է ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՀԵՏԱՔՐՔՎԱԾ ԴԱՏԵՐ

Ասոն Աղաբաբյանը հիվանդանոցում

ԵՐԵՎԱՆ, 8 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Փետրվարի 8-ին մայրաքաղաքի Շենգավիթ համայնքի առաջին ատյանի դատարանում հետածգվեց Աջափնյակի քաղաքական ընտրությունների գործով մեղադրվող Ասոն Աղաբաբյանի ու մյուս ամբաստանյալների դատաքննությունը: Նիստում հայտնվեց, որ Ա. Աղաբաբյանը սրտի կաթվածով գտնվում է հիվանդանոցում:

Նիստն ընդմիջվեց անորոշ ժամանակով: Դատարանը որոշեց Ա. Աղաբաբյանի առողջական վիճակի մասին հարցում անել համապատասխան կլինիկա, ապա նշանակել նիստի օրը:

Դատական նիստը հետաձգվեց փետրվարի 11-ին

ԵՐԵՎԱՆ, 8 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Փետրվարի 8-ին Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը շարունակեց Ասոյիկ Եղիսկոպոս Արիստակեսյանի եւ այլ գործով մյուս ամբաստանյալների դատաքննությունը (մեղադրվում են խոշոր գումարների յուրացումների մեջ):

Նախորդ նիստում դատարանը դիմել էր ՀՀ փաստաբանների միությանը խնդրանքով՝ պետպատվերի կարգով փաստաբան տրամադրել ամբաստանյալ Համլետ Սարյանին եւ վերջինիս կնոջը: Նույն իրական գործով ամբաստանյալ Նինա Մարտիրոսյանին:

Նույն նիստում ամբաստանյալ Սարյանն առարկել էր դատարանի որոշման դեմ՝ նշելով, որ չի հրաժարվում իր դատապատասխան կրումվել Գրիգորյանից:

Այսօր Կ. Գրիգորյանը ներկայացել էր նիստին ու կշարունակի պատասխանել Հ. Սարյանի եւ Ն. Մարտիրոսյանի շահերը:

Դատարանը պետք է շարունակեր լսել Հ.Սարյանի ցուցմունքները, սակայն նա հայտարարեց, որ վատառողջ է եւ այդ պահին չի կարող ցուցմունք տալ:

Այս ամբաստանյալ Հենրիկ Կարապետյանը եւս հրաժարվեց ցուցմունք տալուց: Նա պատճառաբանեց, որ նիստին ներկա չէ իր պաշտպան Ռուբեն Սահակյանը: Ամբաստանյալը երբ որ ժամանակ խնդրեց պաշտպանի հետ խորհրդակցելու համար:

Նիստը կշարունակվի փետրվարի 11-ին:

Առաքել Մովսիսյան. վկաները չներկայացան

ԵՐԵՎԱՆ, 8 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Փետրվարի 8-ին մայրաքաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանում, դատավոր Սուրիկ Կոստանյանի նախագահությամբ նշանակված Առաքել Մովսիսյանի (Շմայս) դատը հետաձգվեց՝ վկաների նիստին չներակայանալու պատճառով:

Նիստը կշարունակվի վաղը՝ փետրվարի 9-ին, դատարանը կշարունակի լսել իրական գործով վկաներին:

ԱՄՆ

Հակահայ տրամադրությունների համախմբում

Վաշինգտոնի «Նեշնլ ջոռնլի» հրատարակած փետրվարի 2-ի «Կոնգրես դեյլի» հաղորդագրությունը տեղեկացնում է, որ ամերիկյան մայրաքաղաքում իր հեղինակությունը բարձրացնելու եւ ռազմական զինամթերքի ձեռքբերումը հեշտացնելու նպատակով թուրքական կառավարությունը երեք նախկին կոնգրեսականներ է վարձել Մ. Նահանգներում իր շահերը ներկայացնելու համար:

Քարոզչական նորաստեղծ խմբակցությունը ղեկավարելու է Ներկայացուցիչների պալատի դրամական հատկացումների հանձնաժողովի նախկին նախագահ Բոբ Լիվինգստոնը, որն այժմ «Լիվինգստոն գրուպն» է ղեկավարում: Նրան օժանդակելու են նույն պալատի կանոնների հանձնաժողովի նախկին նախագահ Ջերալդ Սոլոմոնը, որն այժմ գլխավորում է «Սոլոմոն գրուպ» ընկերությունը եւ նյույորքցի կոնգրեսական Սթիվեն Սոլարզը, որը հայտնի է «Սամբուլցի կոնգրեսական» մականունով եւ այժմ զբաղեցնում է APCO ասոցիացիայի գլխավոր խորհրդատուի պաշտոնը:

Իրենց ծառայությունների դիմաց խմբակցության անդամները վաստակելու են տարեկան 1,8 մլն դոլար եւ զբաղվելու են հիմնականում Թուրքիայի համար 1 մլրդ դոլարի արժողությամբ հարձակողական տիպի ինքնաթիռներ ձեռք բերելով ու Կոնգրեսի անդամների շրջանում Թուրքիայի վարկը բարձրացնելով: Քրդական խնդիրների առնչությամբ այդ վարկը վերջին տարիներին չափազանց խուճապել էր:

Լիվինգստոնը, Սոլոմոնը եւ Սոլարզը ծանոթ անուններ են ամերիկահայերի համար: Նրանցից յուրաքանչյուրն իրեն «լավագույնս» դրսեւորել է հատկապես հակահայ տրամադրություններով սկսած ցեղասպանության պաշտոնական ճանաչումը խափանելուց մինչեւ թուրք-ադրբեջանական շրջափակումը խրախուսելն ու Ղարաբաղի ինքնորոշման դեմ պայքարելը:

«Զարմանալի չէ, որ այդ երեք անձնավորությունները միանալով առաջ մղեն Թուրքիայի շահերը մեր երկրում եւ անհատապես օգտվեն ֆինանսական առումով, ասել է ՀՅՊ Ամերիկայի Հայ դատի հայկական կազմակերպության գործադիր տնօրեն Արամ Համբարյանը: Նրանք ընդունակ են Կոնգրեսում սկսած իրենց գործունեությունը այս անգամ ավելի բարձր աշխատավարձով: Հայկական հարցերի կողմին ընդունակ են արդարացնել Կիպրոսի զավթումը, Իրանի հանդեպ ցեղասպանական արշավը եւ Իսրայելում փոխադարձանությունների նկատմամբ հետզհետե աճող սահմանափակումները»:

Հիշեցնենք, որ 1998-ի սեպտեմբերին Լիվինգստոնն ու Սոլոմոնը խստագույն պայքար էին ծավալել ազատության աջակցության օրենքից ջնջելու 907 հոդվածը, որով սահմանափակվում է ամերիկյան օժանդակությունն Ադրբեջանին մինչեւ վերջինս չվերացնի Հայաստանի եւ Ղարաբաղի շրջափակումը: Հատկապես Լիվինգստոնը բացահայտ ագրեսիվ ոճով էր հանդես եկել: Սակայն թուրք-ադրբեջանական կառավարությունների, ինչպես նաեւ խոշոր նավթարդյունաբերական ընկերությունների համատեղ ջանքերը հաջողությամբ չպսակվեցին: 182 դեմ եւ 231 կողմ ձայներով հոդվածը մնաց ուժի մեջ: Երրորդ անձը Սոլարզը, իր ամբողջ կարիերայի ընթացքում հակադրվել է ցեղասպանության հիշատակմանը Մ. Նահանգներում:

Պարտության մատնված նախկին կոնգրեսականներից է նաեւ Գրեգ Լոլինը, որն այժմ «Պարոն Բոգզ» ֆիրմայի միջոցով է քարոզչություն կատարում հօգուտ Թուրքիայի: 1995-ին նա իրեն ներկայացրել էր որպես «թուրքերի ձայն» Ամերիկայում:

Ուկրաինայի աջերը ծեծել են սոցիալիստներին եւ գրավել նախագահության տրիբունան

ԿԻԵՎ, 8 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ուկրաինայի խորհրդարանի աջ կենտրոնամետ մեծամասնության ներկայացուցիչները նոր խոսնակի համար նախագահության տրիբունա են ադրահովել ծեծելով հացադուլ հայտարարած սոցիալիստ պատգամավորներին: Այս մասին ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի թղթակցին հայտնել է Սոցիալիստական կուսակցության առաջնորդ Ալեքսանդր Մորոզը:

Նրա ասելով, այսօր նստաշրջանն սկսվելուց երեք ժամ առաջ մեծամասնության շուրջ 70 պատգամավորներ մտել են Գերագույն ռադայի շենք եւ գրավել նախագահության տրիբունան: Նրանց ճանապարհին հայտնվել են սոցիալիստական կուսակցությունը ներկայացնող պատգամավորներ, որոնք այստեղ անժամկետ հացադուլ են հայտարարել՝ ի նշան բողոքի խոսնակ Ալեքսանդր Տկաչենկոյին եւ նրա առաջին տեղակալ Ադամ Մարտինյուկին պաշտոնից հեռացնելու դեմ:

Ինչպես հայտնել է Ալեքսանդր Մորոզը, մեծամասնությունը ներկայացնող պատգամավորները հացադուլավորներին ծեծել են եւ միայն դրանից հետո պատգամավորները տեղեր են զբաղեցրել նախագահությունում:

Ելցինը գիրք է գրում

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 8 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի առաջին նախագահ Բորիս Ելցինը գիրք է գրելու իշխանության գլուխ իր գտնվելու ժամանակամիջոցի մասին: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, այդ մասին երկուշաբթի օրը հայտարարել է «Փաբլիք աֆերս» հրատարակչության ներկայացուցիչը, որն էլ հրատարակելու է Ռուսաստանի նախկին նախագահի հուշագրությունը: Ինչպես հայտարարել է հրատարակիչը, Բորիս Ելցինն արդեն ձեռնամուխ է եղել գրքի ստեղծմանը, որի աշխատանքային վերնագիրն է «Կեսգիշերային օրագրեր»: Աշխատանքում նրան օգնում է նախագահի վարչակազմի նախկին ղեկավար Վալենտին Յումաշեւը: Գիրքը պետք է պատրաստ լինի արդեն այս տարվա մայիսին: Ենթադրվում է, որ «Կեսգիշերային օրագրերը» լույս կտեսնի հոկտեմբերին:

Սթիվե Մեսիչը՝ Խորվաթիայի նոր նախագահ

ԲԵԼԳՐԱԴ, 8 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Առաջիկա հինգ տարվա համար Խորվաթիայի նոր նախագահ դարձավ ընդդիմության ղեկավարներից մեկը Սթիվե Մեսիչը: Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի հաղորդման, երկուշաբթի օրը կայացած ընտրությունների երկրորդ փուլի արդյունքներով Սթիվե Մեսիչը քվեաթերթիկների 99 տոկոսի հաշվառումից հետո ստացել է ձայների 56 տոկոսը: Նրա մրցակիցը Խորվաթիայի սոցիալ-ազատական կուսակցության ղեկավար Դրաժեն Բուդիշան հավաքել է ձայների 44 տոկոսը:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
BMW-325
մակնիշի
ավտոմեքենա
(6 ցիլինդր):
Գինը՝ պայմանագրային:
Հեռ.՝ 522466

Իրաքը ժխտել է իր մեղսակցությունը Թեհրանի պայթյուններին

ԿԱՀԻՐԵ, 8 ՓԵՏՐՎԱՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Բաղդադը ոչ մի առնչություն չունի Թեհրանում տեղի ունեցածի հետ, որը գտնվում է Իրաքից հարյուրավոր կիլոմետրեր հեռու», այսօր նշվում է Իրաքի ԻՆԱ լրատվական գործակալության հայտարարության մեջ:

Ինչպես հայտնի է, Իրաքի տարածքում հանգրվանած Իրանի ժողովրդի մոջահեդների կազմակերպություն իրանական ընդդիմադիր խմբավորումը իր վրա է վերցրել պատասխանատվությունը Թեհրանի նախագահական համալիրի ականանետային գնդակոծման համար, որի հետեւանքով զոհվել էր մեկ եւ վիրավորվել՝ 6 մարդ: «Իրաքն իր մոտ ընդունել է Իրանի ժողովրդի մոջահեդների կազմակերպությանը, սակայն նա չի միջամտում ոչ նրա ներքին գործերին, ոչ էլ նրա քաղաքական ու ռազմական գործունեությանը», նշել է ԻՆԱ գործակալությունը:

Այս հայտարարությունն արվել է ի պատասխան Իրանի «Իսլամական հեղափոխության պահապաններ» զորաբանակի հրամանատար գեներալ Յահյա Ռահիմ Սաֆավիի կողմից Բաղդադի հասցեին ուղղված այն մեղադրանքի, թե այդ ձեռնարկման ետեւում կանգնած է Իրաքը:

ARMENTEL
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմենտելը հայտարարում է մրցույթ՝ Սիսիան քաղաքում անգլերենի իմացությամբ, տեխնիկական կրթությամբ անձանց ընտրության համար: Բոլոր դիմողները պետք է տիրապետեն հայերեն եւ անգլերեն լեզուների: Դիմողներն իրենց ռեզյումեները եւ որակավորման վկայագրերը փակ ծրարներով մինչեւ 2000 թ. փետրվարի 20-ը կարող են ներկայացնել հետեւյալ հասցեով՝ Երեւան, Ահարոնյան 2, 516 սենյակ, կադրերի ղեկավարման վարչություն:

ԱՐՄԵՆՏԵԼ ՀՁ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱԿԱՆ

9 փետրվար

9.00 Հայլուր
9.20 Հեռուստասերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
10.20 Սամուրի կրակ
10.30 Սերիալ «Ռեյնի Սանիֆեստը» (վերջին սերիա)
11.00 Գ/Ֆ «Ռալլի»
12.30 Սուլտֆիլմ «Մի անգամ Ավստրալիայում»
13.00 Հայլուր
13.20 Ռուբիկոն+
17.00 Հայլուր
17.20 Սուլտֆիլմ «Հրաբագուծ խեցգետինը»
17.30 Վահան Տերյան-115
18.00 Սերիալ «Սուրճ կնոջ բուրմունքով»
19.00 1 լուր
19.10 «Սեղան» լոտո
19.50 Ռուբիկոն
20.25 Արտակարգ ալիք
20.35 Տուն տունիկ
21.00 Հայլուր
21.40 Ազգային ժողովի նիստում. հայտարարություններ, հարցեր կառավարությանը (արբանյակային հեռարձակմամբ)
21.40 Գ/Ֆ «Կորած մանկություն»
23.10 Երաժշտական ֆիլմ «Գորանի՞»
23.40 Հայլուր
00.00 Կեսգիշերային ծեծրնթաց
01.00 Ռուբիկոն+

Պրոմեքեաս

9.05 Վաղ առավոտյան
10.00 Սուլտֆիլմ
10.10 Բնության արգելանոցներ. Վազա
10.35 Ծանոթ-անծանոթը
10.55 Գ/Ֆ «Հանդիպման վայրը փոխել չի կարելի» (3-րդ մաս)
12.00, 18.05, 20.30, 24.00 Լուրեր
18.20 Սուլտֆիլմ
18.30 Մեծ էրմիտաժ. Ֆրանսիայի արվեստը
19.05 Սերիալ «Ընտանեկան ալբոմ» (1-ին մաս)
20.00 Երաժշտական ծրագիր «Սոլի բանալի»
21.00 «Մոսկվան եւ ընկ.»
21.55 Գ/Ֆ «Օձի աչքերը»
23.15 Լուրեր (ռուսերեն)
23.30 Ռեբ երեկոյան

9.00 Տոմար
11.00 Ավետա (կրկնություն)
11.20 Ատյարեզ (կրկնություն)
19.00 Սամուրի խոսնակ
19.10 Չղջիկ
19.30, 21.30, 23.30 Սուրհանդակ
19.50 Գ/Ֆ «Եկվորները»
22.05 Քոնիկոն
22.15 Գիսաստղեր
22.40 Կամ... կամ
24.00 Զրո ժամ
00.05 Սուր սենյակ
00.30 Գ/Ֆ «Սուրբը» (վարարին Սուրհանդակ)

7.00 Բարի առավոտ
10.00 Նորություններ
10.15 Սերիալ «Քնքուշ թույն»
16.00 Նորություններ
16.20 Սուլտսերիալ «Ուրվական որսացողները»
16.45 Հրաբալի ընկերախումբ
17.00 Զուլգլիների կանչը
17.25 Մինչեւ 16 եւ բարձր
18.00 Սերիալ «Քնքուշ թույն»
19.00 Նորություններ
19.25 Դիմակներ-տոմ
19.55 Մարդը եւ օրենքը
20.50 Սերիալ «Տկուն աղջիկները»
21.45 Բարի գիշեր, երեխաներ
22.00 ժամանակ
23.00 Գ/Ֆ «Նրա ափերին» (դերերում Ֆ. Սելլեր, Պ. Պորիժկովա. ԱՄՆ, 1988 թ.)
00.50 Քաղաքակրթություն
01.10 Նորություններ
01.30 Գ/Ֆ «Կատարյալ վկան» (դերերում է Քրիսի, Բ. Դոնեհի, Լ. Հարինգթոն. ԱՄՆ, 1989 թ.)

7.30-10.20 Բարի լույս. Ռուսաստան
8.00, 9.00, 10.00 Լուրեր
9.15 Հեռուստատեսային հատուկ մարտական ստորաբաժանում. հերթապահ բաժանումներ
10.20 Քվանտային բժշկագիտություն
10.30 Հեռուստահանդես «Արենա սպորտ»
11.00 Քվանտային բժշկագիտություն
11.10 Սերիալ «Գնչուհին»
12.00 Սերիալ «Մեր գաղտնիքի ամաթը»
12.50 Սուլտֆիլմ
13.00 Իմ XX դարը
13.25 Հեռուստատեսային հատուկ մարտական ստորաբաժանում
13.50 Քվանտային բժշկագիտություն
14.00, 18.00, 20.00, 22.00, 02.00 Լուրեր
14.25 Հեռուստահանդես «Կանանց խաղալ»
15.10 Սերիալ «Անտոնելա»
16.00 Սերիալ «Վայրի հրեշակը»
16.50 Սուլտֆիլմ «Խլուրդն ու ծամոնը»
17.00 Խանութ բազմոցի վրա
17.20 Բժշկական լրատու
17.30 Սուլտծրագիր
18.20 Սեսարակ
19.05 Սերիալ «Լոս Անջելեսի տարը 2»
20.30 Սերիալ «Պետերբուրգյան գաղտնիքները»
21.25 Ինձ հեզ ռեժիսոր
22.45 Կինոյի ժամ. Բորիս Տոկարյովը «Պրեզիդենտը եւ նրա սիրուհին» ֆիլմում
00.30 Նորաձեւություն+TV
01.45 Հերթապահ բաժանումներ
02.20 Խանութ բազմոցի վրա

ՍՓՅՈՒՌ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ Հեռ. 590000 • http://www.spyur.am

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունեաց 2. Գրանցման թիվ 65. Դասիլ 69150. Պատուեր 1196. Տպաքանակը՝ 4000. Ստորագրված է տպագրության 8.02.2000. Գինը՝ 100 դրամ